«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԳՅՈՒՄՐՈՒ «ՊՐՈԳՐԵՍ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան 2023թ.

# ՆԱԽԱԲԱՆ

Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի (այսուհետ՝ ԳՊՀ բժշկական քոլեջ, ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ. -ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից:

Հավատարմագրման գործընթացն իրականացվել է Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը:

Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա: Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ..... 2
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ ..... 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ..... 4
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 14
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ..... 14
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ ..... 14
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ..... 17
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 17
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ..... 18
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 21
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ..... 26
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ..... 32
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ ..... 37
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ..... 41
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ..... 43
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ..... 47
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ..... 50
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ..... 54
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ..... 59
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ..... 60
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ ..... 60
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ..... 61
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ ..... 63
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ..... 65
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ..... 66
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 67

# ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

## ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականցրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական գնահատում իրականացնելիս խումբը հաշվի է առել, որ Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի առաքելությունը ընդհանրության մեջ արտահայտում է Պրոգրես կրթահամալիրի (համալսարան, քոլեջ, դպրոց) կոնցեպտուալ նպատակադրումը և մեկտեղված է համալսարանի առաքելության հետ: Փորձագիտական խումբը գտնում է, որ համալսարանի առաքելությունն իր ձևակերպման մեջ բավականին ընդգրկուն է, մանավորաբար՝ «Համալսարանի կերտումն է որպես մարդու կենսական ինքնորոշման տարածք ժամանակակից մշակութային պրակտիկայում՝ իր ողջ բազմազանության մեջ», ուր միջին մասնագիտական կրթության շրջանակն արտահայտված չէ: Ինչպես համալսարանի, այնպես էլ քոլեջի գործունեության տիրույթում գործում է 2011-2015թթ. Զարգացման ռազմավարական ծրագիրը, որը քոլեջն իր ինքնավերլուծությունում ներկայացրել է 2011-2020թթ. Ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ՌԾ) տեսքով: ՌԾ-ով առանձնացված ուղղություններով, ինչպես նաև սահմանված նպատակներով ու հիմնախնդիրներով, ակնկալվող արդյունքներով, արդյունավետության ցուցանիշներով ևս քոլեջը միջին մասնագիտական կրթության հետ կապված տարբերակումներ չունի: Այս կապակցությամբ փորձագիտական խումբը կարծում է, որ անհրաժեշտ է տարանջատել կրթահամալիրում իրականացվող բարձրագույն կրթության և միջին մասնագիտական կրթության ռազմավարական ուղղություններն ու նպատակները, առկա խնդիրները, գործունեության ցուցիչները՝ հատկապես հստակեցնելով քոլեջի գործունեության հետ կապված ուղենիշային ցուցանիշները: Նշյալի համատեքստում հարկ է նշել, որ համալսարանի նոր ՌԾ-ի, այդ թվում և քոլեջի նոր ռազմավարության մշակման աշխատանքները հապաղում են՝ կապված համալսարանի և քոլեջի միջազգայնացման գործընթացներով, իսկ մինչ այդ, ըստ քոլեջի, նոր ՌԾ ունենալու անհրաժեշտություն չի առաջացել: Նոր ՌԾ-ի մշակմանը արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը դրականորեն կարող է անդրադառնալ քոլեջի ռազմավարական և մարտավարական ուղղությունների նախանշման վրա:

ԳՊՀ-ի բժշկական քոլեջն ունի 4 մասնագիտական կրթական ծրագիր (ՄԿԾ) իրականացնելու լիցենզիաներ՝ «Քույրական գործ», «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» և «Մանկաբարձական գործ», ընդ որում «Մանկաբարձական գործ» ՄԿԾ-ում ներկայումս ընդունելություն չի իրականացվում:

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

Փորձագիտական խումբը մի կողմից դրական է գնահատել, որ 2022-2023 ուստարում քոլեջը ներգրավել է օտարերկրյա ուսանողների, մյուս կողմից առանձնացրել է ուսուցման արդյունավետ իրականացման ռիսկերը: Այս պարագայում քոլեջը մեծ աշխատանքներ պետք է իրականացնի, որպեսզի միջազգայնացման նոր նախագծի ներդրման պարագայում դասընթացների արդյունավետությունը և վերջնարդյունքների ձեռքբերումը ապահովվեն: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբն այս ուղղությամբ տեսնում է մի շարք ռիսկեր՝ կապված օտարերկրյա ուսանողների ուսումնառության արդյունավետ կազմակերպման հետ: Մտահոգիչ է, որ ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացում գործատուները ակտիվ մասնակցություն չունեն, չնայած որ քոլեջում ներգրավված գործատու դասախոսների ջանքերով մասնագիտական դասընթացների գործնական պարապմունքները կազմակերպվում են գործատուների բազաներում, և փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերում պետք է արտահայտված լինեն այդ գործնական պարապմունքները՝ իրենց դասավանդման և գնահատման մեթոդներով, առաջադրանքներով, ապահովված վերջնարդյունքներով: Նշյալի համատեքստում դասի պլանների, առաջադրանքների շտեմարանների առկայությունը զգալիորեն կարող են բարելավել ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված դասընթացների կազմակերպումը: Փորձագիտական խումբը տեղեկատվության փոխանցման, ժամանակի կորստի, խնդիրների քննարկումների նվազման, հետևաբար և դասընթացների արդյունավետ իրականացման և վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերման տեսանկյունից խնդրահարույց է համարում թելադրությունների միջոցով գիտելիքի փոխանցումը: Դրա հետ կապված առաջնային պլան է մղվում օտարերկրյա ուսանողներին համապատասխան օտարալեզու մասնագիտական գրականությամբ և ուսումնառության նյութերով ապահովելու խնդրի լուծումը: Քոլեջի մակարդակում ՄԿԾ-ների արդյունավետ կառավարման կարևոր խնդիրներից հատկապես շեշտադրում է գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշների բացակայությունը, վերջնարդյունքահենք դասավանդման մեթոդների ոչ լիարժեք առկայությունը, կուրսային աշխատանքների և ռեֆերատների կամավոր բնույթը, դրանցում հետազոտական բաղադրիչի բացակայությունը, վերջնարդյունքներ ապահովող առաջադրանքների բազայի բացակայությունը և, որ շատ կարևոր է՝ ամփոփիչ ատեստավորման քննությունների ընթացքում միայն տեսական գիտելիքների ստուգումը: Վերոնշյալով ընդգծվում է ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման ռիսկը, որը քոլեջի մակարդակում դեռևս պետք է գնահատվի:

Դրական է գնահատվում, որ ԳՊՀ-ի բժշկական քոլեջը, համարվելով համալսարանի կառուցվածքային միավոր, վերջինիս վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի ռեսուրսային բազայի շրջանակում կարողանում է ապահովել իր կրթական գործընթացները: Սակայն, միևնույն ժամանակ փորձագիտական խումբն իր անհանգստությունն է ներկայացնում առ այն, որ քոլեջի համար կարևոր դիտարկվող կարիերայի պատասխանատուի, արտաքին կապերի և միջազգայանցման պատասխանատուի հաստիքներ առկա չեն, որոնք կարող էին նպաստել ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը,

արտաքին կապերի համալրմանը և միաջազգայնացման գործընթացի արդյունավետ ներդրմանը:

Գովելի է մրցութային կարգով դասախոսական և ուսունմաօժանդակ կազմի համալրման քոլեջի միտումը, սակայն դեռևս մրցույթով աշխատակիցներ չեն ներգրավվել, որը հնարավորություն կտար տարբերակել հավակնորդների մասնագիտական հատկանիշները: Փորձագիտական խումբը առանձնակի շեշտադրում է անգլերեն լեզվով դասավանդողների ներգրավվման անհրաժեշտությունը՝ կարևորելով օտարերկրյա ուսանողների կրթության առավել արդյունավետ կազմակերպումը: Դրական տվյալ է համարվում, որ քոլեջի դասախոսների որակավորումները համապատասխանում են իրենց կողմից դասավանդվող դասընթացներին, բացի այդ, փորձագիտական խումբն առանձնահատուկ շեշտադրում է, որ պրակտիկ ոլորտից մասնագետների և գործատուների ներգրավումը որպես դասավանդողներ, դրական անդրադարձ է ունեցել ուսանողների գործնական կարողությունների ձևավորման վրա: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում առակ են դասախոսական կազմի առաջընթացի դեպքեր, բացի այդ՝ պրակտիկ ոլորտից դասախոսների ներգրավման, ինչպես նաև երիտասարդ դասախոսներ ներգրավելու քոլեջի միտումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Այդքանով հանդերձ, քոլեջը դասախոսների համար մասնագիտական վերապատրաստումներ չի կազմակերպում և հիմնականում վերապատրաստումների մասնակցում են պրակտիկ դասախոսները՝ իրենց աշխատանքի վայրերի պահանջով կամ սեփական նախաձեռնողականությամբ:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվել, որ քոլեջի տարածքներն ու լսարանները հիմնականում ապահովում են տեսական ուսուցման իրականացումը, դրան զուգահեռ՝ գործնական հմտությունների ձեռքբերումն իրականացվում է քոլեջի բազաներում՝ բժշկական կենտրոնում, դեղատներում և ատամնատեխնիկական լաբորատորիայում: Հարկ է նշել, որ քոլեջում իրականացվող ՄԿԾ-ների համար համապատասխան սարքավորումների և տեխնիկական միջոցների կարիք է զգացվում: Ճիշտ է, ընդհանրության մեջ գովարժան է, որ ավելի շատ գործատուների բազայում գործնական պարապմունքներն իրականացնելու պարագայում ուսանողները ուսուցման ընթացքում համեմատաբար շատ են առնչվում իրական դեպքերի, զարգանում են նրանց մասնագիտական հմտություններն ու կարողությունները, սակայն քոլեջը նաև անհրաժեշտություն ունի բարելավելու շենքային պայմանները, սեփական լաբորատորիաներն ու կաբինետները հագեցնելու անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով: Միանշանակ է, որ առաջիկայում օտարերկրյա ուսանողների թվաքանակի ավելացմանը զուգընթաց առավելապես կկարևորվի գործատուներից անկախ և կայուն միջավայրի ձևավորումը: Օտարերկրյա ուսանողների ներգրավումը դրականորեն է նաև անդրադարձել քոլեջի ֆինանսական մուտքերի ձևավորման վրա, ինչն իր հերթին նպաստել է համալսարանի շահույթի ավելացմանը:

Կառավարչական գործընթացները գնահատելիս փորձագիտական խումբն ուներ այն բարդությունը, որ քոլեջի կառավարման փաստաթղթային հենքը համալսարանի կանոնակարգերն են, ընդ որում այդ կանոնակարգերում առանձնացված չեն քոլեջի կառավարչական գործունեության առանձնահատկությունները, քոլեջի կողմից ներկայացված

կառուցվածքային սխեման չի համապատասխանում համալսարանի և քոլեջի կառավարման համակարգին, որի կապակցությամբ փորձագիտական խումբն իր մտահոգությունն է ներկայացրել կառավարման հիերարխիկ կապերի և քոլեջում տեղի ունեցող գործընթացների անհամապատասխանության վերաբերյալ: Հավելելով՝ քոլեջը ղեկավարում է համալսարանի ռեկտորը և քոլեջի հետ կապված որոշումները քննարկվում և ընդունվում են համալսարանի Հիմնադիրների խորհրդում և Գիտական խորհրդում: Փորձագիտական խումբը նշում է, որ Գիտական խորհրդում ներգրավված քոլեջի փոխտնօրենը, դասախոսները և ուսանողները նախաձոռնողականություն չեն ցուցաբերում իրենց առնչվող որոշումների կայացմանը, ավելին՝ երբևէ առաջարկություններով և նախագծերով հանդես չեն գալիս: Քոլեջի կառավարման և վարչարարության գնահատման ընդհանուր համատեքստում փորձագիտական խմբի կողմից շեշտադրվող խնդիրներն են՝ քոլեջը չունի մանկավարժական խորհուրդ, Գիտական խորհրդի որոշումների հիմքում դրված չեն վերլուծված ամփոփ տվյալներ, բացակայում է կառավարման ողջ գործիքակազմը՝ կարճաժամետ և երկարաժամկետ պլաններով, քոլեջի համար առանձնացված ռազմավարական նպատակադրումներով, նպատակադրումների իրականացման պլան-ժամանակացույցներով, կատարողականներով, տարեկան աշխատանքային պլաններով, հաշվետվություններով, գործունեության գնահատման և մշտադիտարկման մեխանիզմներով, գործառնական ռիսկերի գնահատման, կառավարման մեխանիզմներով, հետևաբար փորձագիտական խումբը իր բացասական գնահատականն է տալիս կառավարման համակարգի արդյունավետության վերաբերյալ: Դրական դիտարկում է, որ օտարերկրյա ուսանողների ներգրավմամբ պայմանավորված՝ համալսարանի շահույթը 2022թ. ավելացել է շուրջ 16 անգամ, ուր իր մասնակցությունն ունի նաև քոլեջը: Փորձագիտական խումբն առանձնացնում է, որ ձևավորված շահույթի հաշվին համալսարանն ուզում է լուծել օտարերկրյա ուսանողների կեցության խնդիրը՝ նախատեսելով հանրակացարանային տարածք համարվող 2-րդ շինության վերանորոգումը: Դեպի միջազգայնացում տանող քոլեջի նոր նախագիծը, ինքնին դրական համարելով, փորձագիտական խումբը գտնում է, որ գնահատված չեն քոլեջի ռեսուրսային բավարարվածությունը, գործատուների ռեսուրսային պայմանները, բացակայում են ռիսկերի կանխատեսման և կանխարգելման մեխանիզմները և նշյալի համատեքստում օտարերկրյա ուսանողների քանակի կտրուկ ավելացումը կարող է հանգեցնել կառավարման ճգնաժամի: Հետևաբար, աներկբա է այն պնդումը, որ ինչպես համալսարանի, այնպես էլ քոլեջի միջազգայնացման գործընթացի զարգացումն ուղղակիորեն կապված է ռիսկերի կառավարման և միջազգային կրթության որակի ապահովման գործիքակազմի ներդրման ու կիրառման հետ:

Փորձագիտական խումբը կարևորում է տվյալների հավաքագրման, քոլեջում իրականացվող տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման, վերլուծությունների իրականացման գործընթացները, ՈԱ ՊԻԳԲ շրջափուլի ապահովումը, որոնք, ընդհանրության մեջ, քոլեջում չեն իրականացվում: Արդյունքում՝ որակի մշակույթը, ըստ էության, չի ձևավորվել: Քոլեջի համար առաջնային խնդիր է Որակի ապահովման վարչության գործառույթների հստակեցումը՝ որպես տվյալներ հավաքագրող և վերլուծող

կառույցի, առանց որի հնարավոր չէ իրականացնել ՈԱ գործընթացների արդյունավետ պլանավորում և իրականացում:

Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ 2022-2023 ուստարում քոլեջը օտարերկրյա ուսանողներ է ներգրավել, որի արդյունքում ուսանողների թվաքանակն աճել է, ավելացել են քոլեջի ֆինանսական ռեսուրսները, սակայն անհանգստացնող է, որ օտարերկրյա ուսանողների համար օտար լեզվի իմացության հստակ շեմ սահմանված չէ քոլեջի կողմից, որի պարագայում նրանց ուսումնառությունն հնարավոր է առավել արդյունավետ կազմակերպել:

Քոլեջի կողմից հետազոտությունը որպես կրթական գործունեության առաջնահերթություն չի դիտարկվում և հետազոտության ոլորտում քոլեջը չունի մշակված ռազմավարություն՝ սահմանված չեն հետազոտական նպատակները, պլանավորումներ ևս առկա չեն: Նշյալի համատեքստում փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի համար առաջնային խնդիր է հետազոտության իր մոդելի հստակեցումը և ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի ներդրումը: Հարկ է ավելացնել, որ քոլեջում որոշ դասախոսների սեփական նախաձեռնողականությամբ առաջարկվող աշխատանքները՝ պաստառներ, ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ, ուսումնական գործընթացի մաս չեն կազմում և իրականացվում են բացառապես ուսանողների ցանկությամբ, ուր բացակայում են վերլուծական բաղադրիչը և ինքնուրույն, ստեղծագործ մոտեցումը:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը որոշակի գործընթացներ է իրականացնում արտաքին հաշվետվողականություն ապահովելու համար, զուգահեռաբար՝ քոլեջի կողմից կառուցվածքային հիերարխիկ կապերի հստակեցումը, ներքին հաշվետվողականության մեխանիզմների ներդնումը էապես կարող են նպաստել իրականացվող գործընթացների արդյունավետության բարձրացմանն ու շահակիցների շրջանում իրազեկվածության բարձրացմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև մշակվող հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի առկայությունը, որը հաստատությանը թույլ կտա վեր հանել կատարված աշխատանքների բարելավման ենթակա կողմերը:

Փորձագիտական խումբն արժևորում է, որ քոլեջը տարածաշրջանի բժշկության ոլորտի գործընկեր կազմակերպությունների հետ ունի փոխշահավետ գործուն համագործակցություններ, հիմական գործընկերները տարածաշրջանում ոլորտի առաջատար կազմակերպություններ են, որոնց ռեսուրսային բազաներն ապահովված են կլինիկական հմտություններ ապահովող անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով: Այդ կազմակերպություններում իրականացվում են քոլեջի արտադրական և ուսումնական պրակտիկաները, բացի այդ՝ նաև գործնական պարապմունքները: Ակնառու է՝ գործընկեր կազմակերպություններում աշխատող քոլեջի դասախոսները մեծ դերակատարում ունեն գործնական պարապմունքները գործատուների բազաներում իրականացնելու գործում, որի արդյունքում քոլեջի ու գործատուների միջև մասնակցային կրթական միջավայր է ձևավորվել՝ նպաստելով ուսանողների կլինիկական հմտությունների ձևավորմանը, գործատուների մոտ աշխատելուն: Փորձագիտական խումբը դրական է գնահատում 2022թ.-ից համալսարանի և քոլեջի կրթական ծառայությունների արտահանման և միջազգայնացման գործընթացը, որի

շրջանակում քոլեջը կարևորում է միջազգայնացումն ու օտարերկրյա ուսանողների թվի ավելացումը, սակայն դեռևս մշակված չեն միջազգայնացման ուղենիշային փաստաթղթերը, որոնք կարող են օժանդակել միջազգայնացման գործընթացները: Հաշվի առնելով, որ քոլեջում դեռևս միջազգայանացման գործընթացի առաջին ցիկլը չի ավարտվել, առկա չեն այդ գործընթացի արդյունավետության համարժեք գնահատականներ, հետևաբար նշյալի համատեքստում փորձագիտական խումբը շեշտադրում է, որ նոր նախագծի ներդրման ռիսկերի գնահատումը հնարավոր չէ իրականացնել առանց հստակ սահմանված միջազգայնացման քաղաքականության, այդ նախագծի ներդրման և իրագործման նկատմամաբ վերահսկողության սահմանման: Համալսարանի և քոլեջի միջազգայնացման ներկայիս փուլում օբյեկտիվ անհրաժեշտություն է վարչական և դասախոսական անձնակազմի անգլերեն լեզվի իմացության մակարդակի բարձրացումը, որի հետ կապված համալսարանն առաջիկայում նախատեսել է իրականացվել դասախոսների և վարչական աշխատակիցների անգլերեն լեզվի վերապատրաստումներ:

**Հաստատության ուժեղ կողմերն են.**

1. Բժշկական ոլորտում պահանջարկ ունեցող ՄԿԾ-ների առկայությունը,
2. Ուսանողների իրավունքները պաշտպանող կառույցի առկայությունը,
3. Պրակտիկ ոլորտից ներգրավված դասախոսական կազմը,
4. Համալսարանի և քոլեջի կրթական ծառայությունների արտահանման և միջազգայնացման գործընթացի իրականցումը,
5. Գործատուների հետ համատեղ մասնակցային կրթական միջավայրի ձևավորումը,
6. Դիվերսիֆիկացված ֆինանսական ռեսուրսները,
7. Քոլեջի ունեցած շենքային պայմանները,
8. Քոլեջում իրականացվող գործընթացների արդյունքների թափանցիկության ապահովմանն ուղղված քոլեջի իրականացրած քայլերը,
9. Կարճաժամկետում ֆինանսական ռեսուրսների զգալի աճի ապահովումը:

**Հաստատության թույլ կողմերն են.**

1. Քոլեջի կառավարչական գործընթացներում փաստաթղթային հենքի բացակայությունը,
2. Երկարաժամկետ և կարճաժամկետ պլանների բացակայությունը,
3. Ռիսկերի կառավարման համակարգի բացակայությունը,
4. Գործընթացների գնահատման և մշտադիտարկման մեխանիզմների բացակայությունը,
5. ՊԻԳԲ շրջափուլի բացակայությունը,
6. ՄԿԾ-ների ոչ արդյունավետ կառավարումը,
7. Դասավանդման և գնահատման արդյունավետ մեթոդների բացակայությունը,
8. Դասախոսական և ուսանողական համակազմերում հետազոտական աշխատանքների սակավ լինելը,
9. Միջազգայնացման քաղաքականության բացակայությունը,
10. ՈԱ մեխանիզմների բացակայությունը:

**Հիմնական խորհրդատվություններ.**

**Առաքելությունը և նպատակները**

1. Մշակել նոր ՌԾ, հստակ սահմանել քոլեջի առաքելությունը, նպատակադրումները, տեսլականը, սահմանել քոլեջի գործունեության ծրագրի արդյունքային շրջանակը՝ ներառելով արտաքին և ներքին շահակիցներին։
2. Մշակել նոր ՌԾ-ի իրականացման ռիսկերի գնահատման մեխնիզմներ։
3. Մշակել քոլեջի գործունեության ՌԾ-ի պլան-ժամանակացույց՝ համապատասխան արդյունքային ցուցիչներով։
4. Ներդնել ՌԾ-ի իրականացման արդյունավետության գնահատման գործիքներ։

**Կառավարումն ու վարչարարությունը**

5. Ձևավորել քոլեջի գործունեությունը կարգավորող փաստաթղթերի հենք՝ տարանջատելով քոլեջի առանձնահատկությունները։
6. Ձևավորել մանկավարժական խորհուրդ՝ ուսանողների և դասախոսների գործուն մասնակցության ապահովմամբ։
7. Գնահատել միջազգային կրթության ներդրման ռիսկերը։
8. Իրականացնել երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորում՝ դրանք միմյանց հետ համահնչեցնելով։
9. Մշակել և ներդնել գործունեության արդյունավետության գնահատման և մշտադիտարկման մեխանիզմեր։
10. Ներդնել և գործարկել կառավարման ՊԻԳԲ շրջափուլը։
11. Ձևավորել քոլեջի գործունեությանը համապատասխանող կառուցվածքային սխեմա, հստակեցնել և ճշգրտել կառուցվածքային միավորների գործառույթները։
12. Մշակել պաշտոնների անձնագրեր սահմանված բոլոր հաստիքների համար։
13. Մշակել աշխատանքային պլաններ, ներդնել աշխատանքային պլաններ-հաշվետվություններ սխեման։

**Մասնագիտության կրթական ծրագրերը**

14. Ներգրավել գործատուներին ՄԿԾ-ների մշակման և բարելավման գործընթացներում՝ սահմանելով հստակ ընթացակարգ։
15. Ձևավորել դասի պլանների և կարողություններին ձեռքբերմանը միտված առաջադրանքների շտեմարաններ՝ դարձնելով դրանք ՄԿԾ-ների պարտադիր բաղադրիչ։
16. Մշակել և գործարկել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն՝ ՄԿԾ ուսումնառության արդյունքներին համապատասխան, որը կնպաստի ուսանողների վերլուծական կարողությունների զարգացմանը։
17. Վերանայել ամփոփիչ ատեստավորման անցկացումը՝ ներդնելով գործնական հմտություններն ստուգող հարցեր, առաջադրանքներ։

18. Բարելավել ՄԿԾ-ները՝ իրականացնելով համեմատական վերլուծություն (բենչմարքինգ) ոչ միայն տեղական, այլև միջազգային համանուն քոլեջների հետ՝ օտարերկրյա ուսանողներին միջազգային պահանջներին համապատասխան կրթություն ապահովելու համար։
19. Ներդնել ՄԿԾ-ների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործուն մեխանիզմներ։

**Ուսանողները**

20. Գնահատել դիմորդների հավաքագրման նպատակով իրականացված միջոցառումների արդյունավետությունը և բազմազանեցնել դրանք։
21. Ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով ներդնել գործուն մեխանիզմներ։
22. Ներդնել և կանոնակարգել բացակայած ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների իրականացման գործընթացը։
23. Մշակել և գործարկել ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող գործընթացների համար պատասխանատուի գործառույթներ։
24. Բարելավել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունները՝ ուսանողներին ուղղորդելով աշխատաշուկա։
25. Կանոնակարգել ՈւԽ անդամների ընտրության գործընթացը՝ տեղեկատվությունը հասանելի դարձնելով նաև մյուս ուսանողներին։
26. Մշակել ուսանողներին տրամադրվող կրթական, խորհրդատվական ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ վերլուծելով աշխատանքների արդյունավետությունը։

**Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը**

27. Ներգրավել անգլերեն լեզվով դասավանդողներ՝ կիրառելով դասախոսի ընտրության մրցութային կարգը։
28. Սահմանել դասախոսներին ներկայացվող մասնագիտական հստակ պահանջներ։
29. Մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման մեխանիզմներ։
30. Պլանավորել և իրականացնել մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումներ։
31. Վերանայել և բարելավել դասախոսական կազմի մասնագիտական որակների գնահատման մեխանիզմները։
32. Ներդնել կարիերայի պատասխանատուի և արտաքին կապերի և միջազգայնացման հաստիքները, հստկեցնել նրանց գործառույթները։

**Հետազոտությունը և զարգացում**

33. Մշակել քոլեջի հետազոտական գործունեությունը կարգավորող փաստաթղթային հենք՝ հստակեցնելով հետազոտության ոլորտում քոլեջի նպատակադրումներն ու հետազոտական ուղղությունները:
34. Մշակել և ներդնել կուրսային աշխատանքների և ռեֆերատների կատարման և գնահատման հստակ պահանջներ և չափանիշներ:
35. ՄԿԾ-ներում ներառել հետազոտական, վերլուծական բաղադրիչ պարունակող աշխատանքները:
36. Բազմազանեցնել ուսանողներին տրվող հետազոտական, վերլուծական բաղադրիչ պարունակող առաջադրանքները՝ համապատասխանեցնելով ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի նկարագրիչներին:
37. Դասախոսների համար որպես պահանջ սահմանել առաջավոր փորձի ուսումնասիրությունը և տեղայնացումը:
38. Խթանել դասախոսներին ուսումնական ձեռնարկներ և այլ հետազոտական աշխատանքներ իրականացնելու գործում:

**Ենթակառուցվածքը և ռեսուրսները**

39. Հագեցնել և արդիականացնել լաբորատորիաները և կաբինետները, ստեղծել մասնագիտական վերջնարդյունքներին համապատասխան սարքավորումներով նոր կաբինետներ:
40. Հաշվարկել և գնահատել ուսանող-ռեսուրս հարաբերակցությունը նոր նախագծի ներդրման շրջանակում:
41. Համալրել գրադարանային ֆոնդը օտարալեզու մասնագիտական գրականությամբ և կանոնակարգել գրադարանի աշխատանքները:
42. Մշակել և ներդնել ռեսուրսների կիրառելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
43. Ներդնել ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ:

**Հասարակական պատասխանատվությունը**

44. Ներդնել և կիրառել ներքին հաշվետվողականության վարից վեր և վերից վար մեխանիզմներ՝ ապահովելով կապը քոլեջի երկարաժամկետ ռազմավարական ծրագրի հետ:
45. Սահմանել քոլեջի տնօրենի և ստորաբաժանումների համար հաշվետվությունների ձևաչափ՝ ներդնելով նաև վերլուծական բաղադրիչ:
46. Թարմացնել կայքէջը, դրա օտարալեզու բաժինները, տեղադրել քոլեջի գործունեության վերաբերյալ ընթացակարգեր և հաշվետվություններ:
47. Մշակել և կիրառել հասարակությանը գիտելիքներ փոխանցելու կանոնակարգված մեխանիզմներ՝ ներգրավելով քոլեջի դասախոսներին և ուսանողներին:

**Արտաքին կապերը և միջազգայնացումը**

48. Մշակել միջազգայնացման քաղաքականություն և դրանից բխող ուղենիշային փաստաթղթեր։
49. Հստակեցնել միջազգայնացման գործընթացներում ներգրավված աշխատակիցների գործառույթները։
50. Ամրապնդել և ավելացնել փոխշահավետ համագործակցությունները և ներդնել մասնավորի հետ համագործակցելու նոր ձևաչափեր և գործիքակազմ։
51. Ձևավորել տարածաշրջանային միջին մասնագիտական կրթական փոխշահեկան համագործակցություններ։
52. Իրականացնել անգլերենի վերապատրաստման դասընթացներ, ապահովել դրանց պարբերականությունը։
53. Բարձրացնել ուսանողների անգլերենի իմացության մակարդակը։

**Որակի ներքին ապահովման համակարգը**

54. Մշակել և ներդնել որակի ապհովման գործընթացներն ապահովող քաղաքականություն, ընթացակարգեր՝ հաշվի առնելով քոլեջի առանձնահատկությունները։
55. Հստակեցնել Որակի ապահովման վարչության և այդ բաժնում ներգրավված աշխատակցի/ների գործառույթները։
56. Իրականացնել հստակ պլանավորում որակի ապահովման գործընթացների վերաբերյալ՝ ապահովելով կապը պլանավորվող ՌԾ-ի հետ։
57. Ներդնել և գործարկել ՈԱ ՊԻԳԲ շրջափուլը քոլեջում իրականացվող բոլոր գործընթացներում։
58. Մշակել ՈԱ գործընթացների իրականացման գործիքակազմ (հարցաշարեր, քննարկումներ, գնահատման այլ գործիքներ) ։
59. Ներգրավել ներքին և արտաքին շահակիցներին ՈԱ գործընթացներում։

**Արմենուհի Մհերյան**
Փորձագիտական խմբի ղեկավար

**19–ը մայիսի 2023թ.**

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից՝

1. **Արմենուհի Միերյան՝** Հայաստանի եվրոպական համալսարանի տնտեսագիտություն և ֆինանսներ ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Հեղինե Գևորգյան՝** Երևանի պետական համալսարանի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, Կենսաբանության ԳՀԻ գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի անդամ:
3. **Գոհար Սարգսյան՝** Երևանի հենակետային բժշկական քոլեջ, վերակենդանացման, քաղաքացիական պաշտպանության, անվտանգության և առաջին բուժօգնության ամբիոնի դասախոս, մեթոդիստ, կրթության որակի ապահովման պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ:
4. **Միլենա Միրզոյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» բաժնի 3-րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ: Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ Անահիտ Տերտերյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

### ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

**Դիմում պետական հավատարմագրման համար**

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը 19.05.2022թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո ՄՈՒՀ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր:

Ինքնավերլուծությունն իրականացրել է քոլեջի կողմից ձևավորած աշխատանքային խումբը: Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն և անգլերեն լեզուներով, ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական և բովանդակային առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությունը չի համապատասխանել սահմանված միասնական

ձևաչափին, առկա են եղել տեխնիկական, ձևաչափային և բովանդակային թերություններ: Ինքնավերլուծությունը վերադարձվել է ՄՈՒՀ–ին, քոլեջը սահմանված ժամկետներում շտկել է թերությունները և ինքնավերլուծությունը համապատասխանեցրել ՈԱԱԿ սահմանված ձևաչափին: Ինքնավերլուծությունը ՈԱԱԿ է ներկայացվել 21.11.2022թ.:

**Նախապատրաստական փուլ**

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն[3] և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրի պատասխանատուի, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները, փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող առաջադրանքները:

**Նախանական այց**

2023թ. փետրվարի 9-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպումներին ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

**Փորձագիտական այց**

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. փետրվարի 20-23-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները տարբեր շահակիցների հետ, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ (պլանավորված և հավելյալ), քոլեջի ռեսուրսների[4] և գործատուների բազաների դիտարկումներ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

**Փորձագիտական զեկույց**

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին՝ 14.04.2023թ.: Զեկույցի վերաբերյալ իր դիտողությունները և մեկնաբանությունները քոլեջը ներկայացրել է 27-ը ապրիլի 2023թ.-ին: ՈԱԱԿ-ը կազմակերպել է ՄՈՒՀ-ի և փորձագիտական խմբի հանդիպում՝ պարզաբանելու ՄՈՒՀ-ի դիտարկումները: Հանդիպումից հետո փորձագիտական խումբը պատրաստել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 12-ը մայիսի 2023թ.-ին:

**Անահիտ Տերտերյան**
Փորձագիտական խմբի Համակարգող
**19-ը մայիսի 2023թ.**

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

## ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Պատմություն.** Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը հիմնադրվել է 1996թ., այն հանդիսանում է Գյումրիի Պրոգրես կրթահամալիրի մի մաս և համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում: Գյումրիի Պրոգրես կրթահամալիրն իր մեջ ներառում է համալսարան, քոլեջ և դպրոց: Քոլեջը կառավարվում է բուհի կողմից և սպասարկվում է բուհի ստորաբաժանումներից:
2. **Կրթություն.** Քոլեջն ունի լիցենզիաներ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Ատամնատեխնիկական գործ» և «Դեղագործություն» կրթական ծրագրերով կրթություն իրականացնելու համար: 2023թ. առաջին եռամսյակի տվյալներով քոլեջում կրթություն է ստանում 36 ուսանող, որից 12-ը՝ օտարերկրացիներ: ՄՈՒՀ-ի համար օտարերկրյա ուսանողների ներգրավումը առաջնահերթություն է: Կրթական ծրագրերի իրականացման համար քոլեջում առկա են համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ, ՄՈՒՀ-ը կարևորում է նաև պրակտիկ դասախոսների ներգրավումը, քոլեջում դասավանդում են 7 պրակտիկ մասնագետներ: Ուսանողների համար համապատասխան կրթական միջավայր ապահովելու համար քոլեջը համագործակցում է գործատուների հետ՝ ապահովելով ուսանողների գործնական դասերի և պրակտիկաների իրականացումը գործատուների բազաներում՝ հիվանդանոց, ատամնատեխնիկական լաբորատորիա և դեղատներ:
3. **Հետազոտություն.** Ուսանողների մոտ հետազոտական և վերլուծական կարողություններ ձևավորելու համար ուսանողներին տրվում են կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ և այլ անհատական աշխատանքներ: Կուրսային աշխատանքները ուսանողների կողմից ներկայացվում են կամավորության սկզբունքով: Այն դասախոսները, ովքեր դասավանդում են համատեղությամբ և՛ քոլեջում, և՛ բուհում, ինչպես նաև պրակտիկ բժիշկներ են, իրականցնում են որոշ հետազոտական աշխատանքներ, տպագրում են գրքեր և ձեռնարկներ: Այս գործընթացները ինստիտուցիոնալ բնույթ չեն կրում:
4. **Արտաքին կապեր և միջազգայնացում.** Գյումրու «Պրոգրես» համալսարանի ՌԾ-ում սոցիալական համագործակցության զարգացումը ռազմավարական ուղղություն է: Քոլեջն իր կրթական ծրագրերի իրականացման նպատակով համագործակցում է տարածաշրջանի գործատուների հետ՝ Գյումրիի «Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «Մխիթարյան-դենտալ» կլինիկա, «Ստելա-Նան դեղատուն» ՍՊԸ և այլն: Համագործակցության արդյունքում քոլեջը կարողանում է ներգարավվել նաև գործատու դասախոսների:

   Վերջին մեկ տարվա ընթացքում քոլեջը ներգրավել է նաև միջազգային ուսանողների Շրի Լանկայից, Բանգլադեշից, Կամերունից, Եթովպիայից, Հնդկաստանից, Նիգերիայից:
5. **Որակի ապահովում.** Որակի ապահովման համակարգը Պրոգրես համալսարանում ներդրվել է 2012թ., ներկայումս գործում է Որակի ապահովման վարչությունը, աշխատանքներում ներգրավված է 1 աշխատակից: Վարչությունը միաժամանակ սպասարկում է և՛ բուհին, և՛ քոլեջին: Ներկայումս ՄՈՒՀ-ում չեն իրականացվում տվյալների հավաքագրման և վերլուծման աշխատանքներ:

## I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:**

**Փաստեր:** Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը չունի մշակված առանձին ռազմավարական ծրագիր, առկա է Գյումրու Պրոգրես համալսարանի 2011-2015թթ. Զարգացման ռազմավարական ծրագիրը: Ինքնավերլուծությունում քոլեջը նույն ռազմավարությունը ներկայացրել է որպես 2011-2020թթ. ՌԾ:

ՌԾ-ով սահմանված են ԳՊՀ-ի հիմնական նպատակները, հեռապատկերը, առանձնացված են թվով 7 ռազմավարական ուղղություններ, ներկայացված են դրանցից յուրաքանչյուրի ներկա վիճակը, հիմնախնդիրները: Վերը նշված ՌԾ-ում միջին մասնագիտական կրթության շրջանակն արտահայտված չէ: ԳՊՀ-ի ՌԾ-ում համալսարանի առաքելությունն ունի հետևյալ ձևակերպումը՝ «Համալսարանի կերտումն է որպես մարդու կենսական ինքնորոշման տարածք ժամանակակից մշակութային պրակտիկայում՝ իր ողջ բազմազանության մեջ»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի առաքելությունը մեկտեղված է համալսարանի առաքելության հետ և սահմանված առաքելությունն ամբողջության մեջ արտահայտում է Պրոգրես կրթահամալիրի (համալսարան, քոլեջ, դպրոց) կոնցեպտուալ նպատակադրումը: ԳՊՀ բժշկական քոլեջի համար տեսլական ու երկարաժամկետ նպատակադրումներ սահմանված չեն: ՌԾ-ն ներառում է յուրաքանչյուր ռազմավարական ուղղության հասնելու միջոցները, սահմանված են նպատակը, խնդիրները, խնդիրների լուծման ուղիները, ակնկալվող արդյունքները, արդյունավետության ցուցանիշները: Նշյալի շրջանակում ևս քոլեջի նպատակները, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները հստակեցված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանի նոր ՌԾ-ի, այդ թվում և քոլեջի ռազմավարության մշակման աշխատանքները հապաղում են՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ինչպես ԳՊՀ-ն, այնպես էլ ԳՊՀ բժշկական քոլեջը նոր փոփոխությունների փուլում են, և մինչ այդ նորացված ՌԾ ունենալու անհրաժեշտություն չի զգացվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կապված համալսարանի և քոլեջի միջազգայնացման գործընթացներով, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ՌԾ-ի մշակման շուրջ քննարկումներ արտաքին և ներքին շահակիցների մասնակցությամբ:

ԳՊՀ-ի քոլեջի ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործուն մեխանիզմներ առկա չեն, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի շահակիցների՝ ուսանողների, դասախոսների և գործատուների հետ, տեղի են ունենում քննարկումներ բանավոր մակարդակում, այդ քննարկումները չունեն պարբերականություն և չեն արձանագրվում: Առկա չեն քննարկումների ամփոփումներ, որոնք հիմք կհանդիսանային նոր ՌԾ-ի մշակման համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳՊՀ-ի

երկարաժամկետ նպատակադրումներում քոլեջի առաքելության հստակեցման և ձևակերպման համար իրականացվել են 1-2 քննարկում-հանդիպումներ գործատուների հետ: Փորձագիտական այցի ընթացքում քոլեջի կողմից ներկայացվել է մինչև 2030թ. աշխատանքային և ռազմավարական նոր ուղղությունները՝ ի հավելումն առկա ռազմավարության, ուր կարևորվել է անգլերեն լեզվի իմացության բարձրացումը և տարածումը, աշխատանքի վրա հիմնված ուսուցումը (նշյալ փաստաթուղթը դեռևս գործածության մեջ չի դրվել): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցները, ունենալով գործուն մասնակցություն քոլեջի կրթական գործընթացներին, իրենց ներդրումն ունեն «Ատամնատեխնիկական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն» ՄԿԾ-ներով գործնական հմտություններ ունեցող մասնագետների պատրաստման գործում:

ԳՊՀ-ի ՌԾ-ով ներկայացված են սահմանված նպատակների ակնկալվող արդյունքները, արդյունավետության ցուցանիշները. նպատակ-ակնկալվող արդյունք-արդյունավետության ցուցանիշներ տրամաբանական կապն ընդգծված և թիրախային չէ, ինչպես նաև չի ներառում քոլեջի գործունեության արդյունքային շրջանակը: 2020թ. ՌԾ-ի գործողության ժամկետն ավարտվել է, ՌԾ-ի պլան-ժամանակացույց, կատարողական առկա չէ, իրականացված չէ համալսարանի՝ այդ թվում և քոլեջի գործունեության արդյունավետության գնահատում՝ ըստ ՌԾ-ով սահմանված նպատակադրումների ու ակնկալվող արդյունքների: Առկա է քոլեջի 2022թ. աշխատանքային պլանը, որը քոլեջում գործող միակ աշխատանքային պլանն է, այնտեղ ներառված գործողությունները, քայլերի վերջնարդյունքները ոչ ամբողջությամբ են համապատասխանում քոլեջում իրականացվող կրթական գործընթացներին, մասնավորապես՝ քոլեջի փոխտնօրենի տարեկան աշխատանքային պլանի կազմում, պլանի քննարկում հավանական շահակիցների հետ (ուսանողներ, դասախոսներ), վերահսկողություն պլանի պատշաճ իրականացման նկատմամբ, մոդուլների վերանայում, միջքոլեջային միջոցառումների կազմակերպում, դասալսումների արդյունքների վերլուծություն, դասախոսների վերապատրաստման գրաֆիկի կազմում և այլն: Քոլեջի գործունեության արդյունքները ռեկտորը ներկայացնում է հիմնադիրների ժողովին՝ բանավոր կերպով:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԳՊՀ-ի բժշկական քոլեջում իրականացվող գործընթացները համապատասխանում են Պրոգրես կրթահամալիրի կոնցեպտուալ նպատակադրմանը: Քանի որ քոլեջի առաքելությունը մեկտեղված է համալսարանի առաքելության հետ, քոլեջի նպատակները, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները հստակեցված չեն, հետևաբար ՌԾ-ում միջին մասնագիտական կրթության շրջանակն արտահայտված չէ, բացի այդ հարկ է նշել, որ համալսարանի առաքելությունը շատ ընդհանրական է, իսկ բժշկական ՄԿԾ-ներ իրականացնող ԳՊՀ բժշկական քոլեջի համար տեսլականի ու երկարաժամկետ նպատակադրումների բացկայությունը կարող է վտանգել քոլեջի նպատակային գործունեությանը: Փորձագիտական խումբը որոշակի մտահոգություններ ունի, որ համալսարանի, այդ թվում՝ քոլեջի ՌԾ-ի գործողության ժամկետն

ավարտվել է 2020թ., բայց դեռևս նոր ՌԾ առկա չէ: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչպես համալսարանը, այնպես էլ քոլեջը գտնվում են նոր փոփոխությունների փուլում, ռազմավարության մշակման աշխատանքները կարող էին հապաղել: Ընկալելով և գնահատելով քոլեջում առկա իրողություններն ու նախատեսվող փոփոխությունները՝ փորձագիտական խումբը կարևորում է, որ պայմանավորված համալսարանի և քոլեջի միջազգայնացման գործընթացներով, նոր ՌԾ մշակելու և գործողության մեջ դնելու անհրաժեշտությունն արդեն իսկ ընկալվել է համալսարանի և քոլեջի ղեկավարության կողմից: Դրական է նաև գնահատվում, որ արտաքին շահակիցների հետ որոշակի քննարկումներ արդեն իրականացվել են՝ առաջիկայում դրանք պարբերաբար և փաստարկված դարձնելու միտումով:

Քանի որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման հստակ գործիքներ և մեխանիզմներ առկա չեն, իսկ բանավոր քննարկումների չարձանագրման պարագայում վերլուծություններ իրականացնելը իրատեսական չէ, հետևաբար ներքին և արտաքին շահակիցների կարիքների ամփոփ տվյալները բացակայում են, ինչը կարող է խոչընդոտել նոր ՌԾ-ի մշակման աշխատանքներում նրանց մասնակցությանը:

Գովելի է, որ ԳՊՀ-ի ռազմավարական նպատակադրումներում քոլեջի առաքելության հստակեցման և ձևակերպման համար իրականացվել են 1-2 քննարկում-հանդիպումներ գործատուների հետ: Արդյունքում քոլեջը ներկայացրել է մինչև 2030թ. աշխատանքային և ռազմավարական նոր ուղղությունները, ուր կարևորվել է անգլերեն լեզվի իմացության բարձրացումը և տարածումը, աշխատանքի վրա հիմնված ուսուցումը: Վերոնշյալը կարող է դրականորեն անդրադառնալ քոլեջի ռազմավարական նպատակների ձևակերպման վրա՝ ուղղված քոլեջի հետագա զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրականորեն շեշտադրում է, որ քոլեջի դասախոսները՝ որպես ներքին շահակիցներ, գործատուներն ու շրջանավարտները՝ որպես արտաքին շահակիցներ, գործուն մասնակցություն ունեն քոլեջում գործող 3 ՄԿԾ-ներով գործնական հմտություններ ունեցող մասնագետների պատրաստման գործում, ինչը կարող է նպաստել աշխատանքի վրա հիմնված ուսուցման ներդրմանը: Վերջինս նոր ռազմավարության մեջ ներառելու պարագայում կնպաստի քոլեջում կրթական գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ քոլեջի առաքելությունը համարվում է համալսարանի առաքելության մի մասը, սահմանված առաքելությունը շատ ընդհանրական է, ուր արտահայտված չէ միջին մասնագիտական կրթության շրջանակը, քոլեջի տեսլականն ու երկարաժամկետ նպատակադրումները ևս ընդգծված չեն, քոլեջի ՌԾ-ի գործողության ժամկետն ավարտվել է և դեռևս նոր ՌԾ առկա չէ, միևնույն ժամանակ հաշվի առնելով՝ նոր ՌԾ մշակելու և գործողության մեջ դնելու անհրաժեշտությունն արդեն իսկ ընկալվել է քոլեջի կողմից, իրականացվող կրթական գործընթացներն ընդհանրության մեջ համապատասխանում են ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին, քոլեջի ներքին և արատաքին շահակիցները մասնակցում են կրթական գործընթացներին՝ գործնական հմտություններ

ունեցող մասնագետի պատրաստման տեսլականով, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:**

**Փաստեր**: Քոլջի կառավարման փաստաթղթային հենքը համալսարանի կանոնակարգերն են՝ ԳՊՀ-ի ուսումնական մասի կանոնակարգ, Որակի ապակովման կենտրոնի կարգ, Դասավանդման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կարգ, Ներքին կարգապահական կանոնակարգ, Պրակտիկայի կազմակերպման կարգ: Առկա է քոլեջի Կանոնադրությունը, որով սահմանված են քոլեջի գործունեության առանձնահատկությունները, կառուցվածքը և կառավարումը:

Ըստ կանոնադրության և ներկայացված կառուցվածքի՝ քոլեջը համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում է, քոլեջի գործունեությունը ղեկավարվում է համալսարանի կողմից, քոլեջի իրավասությունները սահմանում է համալսարանը: Քոլեջի բարձրագույն պաշտոնատար անձը, ըստ կանոնադրության, տնօրենն է, քոլեջը ներկա պահին տնօրեն չունի, ունի 1 ուսումնական գծով փոխտնօրեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը կառավարվում է համալսարանի ռեկտորի կողմից: Քոլեջի կառավարման գործընթացում կարևոր դերակատարում ունի նաև համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը՝ որպես վերահսկողություն իրականացնող անձ:

Ըստ կանոնադրության՝ քոլեջի կառավարման բարձրագույն ներկայացուցչական մարմինը մանկավարժական խորհուրդն է, որտեղ որպես ընտրովի անդամներ պետք է ընդգրկված լինեն նաև մանկավարժական, ուսումնաօժանդակ և ուսանողական անձնակազմից անդամներ: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում առկա չէ մանկավարժական խորհուրդ: Քոլեջի հետ կապված որոշումները քննարկվում և ընդունվում են համալսարանի խորհուրդներում (Հիմնադիրների խորհուրդ, Գիտական խորհուրդ), մասնավորապես՝ Գիտական խորհրդում: 2022թ.համալսարանի Գիտական խորհրդի կազմում ընդգրկված են 17 անդամ, որոնցից 4-ը դասավանդում են նաև քոլեջում,

ներգրավված են փոխտնօրենը, քոլեջում սովորող 1 տեղացի և 1 օտարերկրյա ուսանող: Առկա են գիտական խորհրդի նիստերի արձանագրությունները, վերջին ժամանակահատվածում Գիտական խորհրդում քոլեջի գործունեության հետ կապված քննարկվել են 2022-2023 ուստարվա օտարերկրյա դիմորդների փաստաթղթերի ընդունման, գիտելիքների ստուգման հարցերը, ընդունելության արդյունքների ամփոփումները, քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության իրականացման հարցը, աշնանային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման հարցը և այլն:

Համալսարանի կառուցվածքային սխեման չի համապատասխանում համալսարանի կառավարման համակարգին, մասնավորապես՝ փորձագիտական խմբի կողմից դիտարկված կառուցվածքային սխեմայում ներառված է կրեդիտային կենտրոնը, շինարարության բաժինը, հրատարակչությունը, որոնք համալսարանի և քոլեջի կառավարման բլոկում ընդգրկված չեն:

ԳՊՀ-ի գործունեության նպատակը շահույթի ստացումն է, 2021-2022թթ. տվյալներով ձևավորված զուտ շահույթի բաշխման ուղղությունները նախանշված չեն, այն գումարվել է չբաշխված շահույթին: Հարկ է նշել, որ համալսարանի շահույթը 2022թ. ավելացել է շուրջ 16 անգամ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ չբաշխված շահույթի և նոր ձևավորված շահույթի հաշվին համալսարանը պլանավորում է իրականացնել 2-րդ մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ՝ օտարերկրյա ուսանողների համար հանրակացարան ունենալու նպատակով: Քոլեջի եկամուտները հիմնականում ձևավորվում են ուսանողների վարձավճարներից, ուր 2022թ. ավելացել են նաև օտարերկրյա ուսանողների վարձավճարները: Պետք է նշել, որ օտարերկրյա ուսանողների վարձավճարի չափը շուրջ 2,6 անգամ գերազանցում է տեղացի ուսանողների վարձավճարի չափը: 2022թ. տվյալներով քոլեջի օտարերկրյա ուսանողների վարձավճարներից մուտքերը կազմում են համալսարանի համախառն հասույթի 3,7%-ը:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ համալսարանի և քոլեջի միջազգայնացման նոր նախագիծը միտված է ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրով սահմանված զարգացման նպատակային ցուցանիշներից օտարերկրյա ուսանողների թվի ավելացմանը: Հարկ է նշել, որ համալսարանը չի գնահատել իր ռեսուրսային հագեցվածությունը, գործատուների ռեսուրսային պայմանները, ինչպես նաև առկա չեն նոր նախագծի ներդրման ռիսկերի կառավարման մեխանիզմներ:

Քոլեջում և համալսարանում առկա են դասախոսի, դոցենտի, պրոֆեսորի պաշտոնի անձնագրեր: Դասախոսի պաշտոնի անձնագրում առանձնացված են դասախոսի դերը, խնդիրների բնագավառը, աշխատանքային գործառույթները, պատասխանատվությունը, աշխատանքային գիտելիքներն ու կարողությունները, լրացուցիչ գիտելիքներն ու կարողությունները: Քոլեջի այլ աշխատակիցների համար պաշտոնների անձնագրեր առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի փոխտնօրենը, դասախոսներն ու ուսանողները էական մասնակցություն չունեն իրենց առնչվող որոշումների կայացմանը, երբևէ առաջարկություններով և նախագծերով հանդես չեն եկել: Գիտական խորհրդի որոշումների

հիմքում դրված չեն հավաքագրված և վերլուծված տվյալներ։ Որոշումները կայացվում են բանավոր մակարդակում հնչեցված կարծիքների և տեսակետների հիման վրա։ Քոլեջի ՈՒԽ-ում ուսանողների կողմից դուրսբերված ամփոփ խնդիրներ առկա չեն, որոնք կարող էին դրվել Գիտական խորհրդի կողմից կայացված որոշումների հիմքում։

ՄՈՒՀ-ում առկա չէ քոլեջի համար առանձնացված երկարաժամկետ ՌԾ, համալսարանի ՌԾ-ով սահմանված նպատակադրումները տարածվում են նաև քոլեջի կրթական գործունեության նկատմամբ։ Առկա է ԳՊՀ-ի բժշկական քոլեջի 2022թ. տարեկան աշխատանքային պլանը, որն ամբողջության մեջ չի համապատասխանում քոլեջում տեղի ունեցող գործընթացներին։ Խոսքը վերաբերում է քոլեջի փոխտնօրենի աշխատանքային պլանի կազմմանը, քննարկմանն ու վերահսկողությանը, ուսումնական փաստաթղթերի վերանայմանն ու խնդրահարույց կետերի քննարկմանը, առաջարկությունների ներկայացմանն ու փոփոխությունների իրականացմանը, պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքների կոորդինացմանը, դասալսումների իրականացմանը, վերլուծությանն ու ամփոփմանը, որոնք ընդհանրության մեջ չեն իրականացվում քոլեջում և աշխատանքային պլանում նախանշված քայլերի վերջնարդյունքները ևս չեն ապահովվում։ Առկա չեն քոլեջի գործունեության տարեկան պլան-ժամանակացույցներ ըստ տարիների, նպատակադրումների իրականացման գնահատումներ, կատարողականներն ամփոփված չեն համապատասխան հաշվետվություններով։ Աշխատանքային պլաններ չունեն նաև ստորաբաժանումները, ամբիոնները։ Որոշ դասախոսներ անհատական մակարդակում մշակել են իրենց դասի պլանները, սակայն այդ մոտեցումը ինստիտուցիոնալ չէ։ Քոլոջում չեն գործում գործունեություն գնահատման և մշտադիտարկման մեխանիզմներ։

Քոլեջում ուսանողների շրջանում իրականացվել են միայն բանավոր հարցումներ, որոնք որոշակի պարբերականություն չեն ապահովում, չունեն համարժեք վերլուծություններ և ամփոփումներ։ Գործատուների հետ իրականացրել են որոշ քննարկումներ, որոնց ամփոփումները տեղ չեն գտել քոլեջի կառավարչական և կրթական գործընթացներում։ Ինքնավերլուծությունում տարանջատված են բժշկական քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնները։ Որպես ներքին գործոններ առանձնացված են պրոֆեսորադասախոսական կազմի հոսունությունը, լաբորատոր գործիքակազմի ապահովվածությունը, օժանդակ ենթակառուցվածքների աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը և այլն, իսկ արտաքին գործոններ՝ ընդունելությունը, ֆինանսավորման համակարգը, անկանխատեսելի իրավիճակները, աշխատաշուկայի և հասարակական պահանջները, օրենսդրական փոփոխությունները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ գործոնների ուսումնասիրությունները կանոնավոր չեն իրականացվում, ռիսկերի գնահատման և կառավարման մեխանիզմներ առկա չեն։ ԳՊՀ-ի բժշկական քոլեջի կառավարման մակարդակում ՊԻԳԲ շրջափուլը չի գործում, պլանավորում-իրականացում շղթան ապահովված չէ, գնահատում-բարելավում շղթան բացակայում է։

Մասնագիտությունների կրթական ծրագրերի, այլ գործընթացների արդյունավետությունը գնահատելու համար քոլեջում տեղեկատվական բազա առկա չէ, չկան տեղեկատվությունը հավաքագրելու և վերլուծելու մեխանիզմներ, բավարար գործիքակազմ ևս

առկա չէ։ Քոլեջը ձեռնամուխ է եղել շրջանավարտների բազայի ձևավորմանը, շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվությունը սկզբնական հավաքագրման փուլում է։ Քոլեջն ունի կայքէջ, ուր ներկայացված է ընդունելության կարգը, կրթական ծրագրերը։ Տեղեկատվությունը սահմանափակ է կայքէջում, ընթացակարգեր, կանոնակարգեր, հաշվետվություններ տեղադրված չեն։ Գործում է նաև քոլեջի ֆեյսբուքյան էջը, ուր սակավ են հրապարակումները։

**Դատողություններ:** Դրական է, որ քոլեջի կանոնադրությամբ սահմանված են քոլեջի կառուցվածքն ու կառավարումը, սակայն քոլեջի կառավարման փաստաթղթային հենքը համալսարանի կանոնակարգերն են և այդ կանոնակարգերում առանձնացված չեն քոլեջի կառավարչական գործունեության առանձնահատկությունները՝ վտանգելով քոլեջում իրականացվող գործընթացների կանոնակարգվածությունն ու արդյունավետությունը։ Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ համալսարանի կառուցվածքային սխեման չի համապատասխանում համալսարանի և քոլեջի կառավարման համակարգին՝ առաջացնելով կառավարման հիերարխիկ կապերի անհամապատասխանություն տեղի ունեցող գործընթացների հետ։

Օրինաչափ է, որ, որպես համալսարանի կառուցվածքային միավոր, քոլեջը ղեկավարվում է համասարանի ռեկտորի կողմից, քոլեջի հետ կապված որոշումները քննարկվում և ընդունվում են համալսարանի Հիմնադիրների խորհրդում և Գիտական խորհրդում ու, թեև Գիտական խորհրդում ներգրավված են քոլեջի փոխտնօրենը, դասախոսներ և ուսանողներ, նրանք էական մասնակցություն չունեն իրենց առնչվող որոշումների կայացմանը՝ երբևէ առաջարկություններով և նախագծերով հանդես չեն եկել։ Ի հավելումն վերոշարադրյալի՝ փորձագիտական խումբը բացասական է գնահատում, որ քոլեջը չունի մանկավարժական խորհուրդ, որն, ըստ կանոնադրության, քոլեջի կառավարման բարձրագույն ներկայացուցչական մարմին է՝ ընտրովի մանկավարժական, ուսումնաօժանդակ և ուսանողական անդամներով։ Արդյունքում քոլեջի գործունեության կառավարման, սոցիալական և այլ ծրագրերի ձևավորման գործում մանկավարժական և ուսանողական անձնակազմի գործուն մասնակցության ապահովումը վտանգված է։ Բացի այդ՝ Գիտական խորհրդի որոշումները հիմնված չեն վերլուծված ամփոփ տվյալների վրա, այլ բանավոր կերպով հնչեցված կարծիքների և տեսակետների հիման վրա են։ Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջում, բացի դասախոսներից, այլ աշխատակիցներ պաշտոնների անձնագրեր չունեն։ Վերոշարադրյալը ամբողջության մեջ խոչընդոտում է քոլեջի գործունեության արդյունավետ կառավարմանը։

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում, որ պայմանավորված օտարերկրյա ուսանողների ներգրավմամբ՝ համալսարանի շահույթը 2022թ. ավելացել է շուրջ 16 անգամ, ուր ներառված են նաև քոլեջի օտարերկրյա ուսանողների վարձավճարները։ Գովելի է, որ չբաշխված շահույթի և նոր ձևավորված շահույթի հաշվին համալսարանը նախատեսում է իրականացնել 2-րդ մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ՝ օտարերկրյա ուսանողների համար հանրակացարան ունենալու նպատակով։ Սակայն հարկ է

նշել, որ այդ աշխատանաքների իրականացման նախագծային ծրագրեր դեռևս առկա չեն։ Ըստ փորձագիտական ուսումնասիրությունների՝ որքանով էլ համալսարանի և քոլեջի՝ դեպի միջազգայնացում տանող նոր նախագիծը համընկնում է ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրով սահմանված զարգացման նպատակային ցուցանիշներից օտարերկրյա ուսանողների թվի ավելացմանը, այնքանով էլ ռիսկային է՝ հաշվի առնելով ռեսուրսային հագեցվածությունը, գործատուների ռեսուրսային պայմանները, ռիսկերի կանխատեսման և կանխարգելման մեխանիզմների բացակայությունը, բացի այդ՝ մասշտաբի էֆեկտը մեծացնելու պարագայում համալսարանում և քոլեջում կառավարման հիերարխիկ կապերի բացակայությունը կարող է առաջացնել կառավարման ճգնաժամ: Արդյունքում, համալսարանի և քոլեջի միջազգային կրթության զարգացումն ուղղակիորեն կապված է ռիսկերի կառավարման և միջազգային կրթության որակի ապահովման գործիքակազմի ներդրման ու կիրառման հետ։

Փորձագիտական խումբն իր մտահոգությունն է ներկայացնում առ այն, որ քոլեջում բացակայում է կառավարման ողջ գործիքակազմը՝ կարճաժամետ և երկարաժամկետ պլանավորում չի իրականացվում, քոլեջը չունի առանձնացված ռազմավարական նպատակադրումներ, նպատակադրումների իրականացման պլան-ժամանակացույցներ, կատարողականներ, տարեկան աշխատանքային պլաններ, հաշվետվություններ։ Ամփոփելով՝ քոլեջը չունի գործունեության գնահատման և մշտադիտարկման մեխանիզմներ, գործառնական ռիսկերի գնահատման, կառավարման մեխանիզմներ ևս առկա չեն, ուստի վտանգված է կառավարման համակարգի արդյունավետությունը։

Անհանգստացնող է, որ կառավարման ՊԻԳԲ շրջափուլը չի գործում, մասնագիտությունների կրթական ծրագրերի, այլ գործընթացների արդյունավետությունը գնահատելու համար քոլեջում տեղեկատվական բազա առկա չէ, բացակայում է տեղեկատվությունը հավաքագրելու և վերլուծելու գործիքակազմը։ Դրական է դիտվում, որ քոլեջը ձեռնարկել է ձևավորել շրջանավարտների բազա, որի արդյունքում շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրման սկզբնական փուլում է: Ունենալով կայքէջ և ֆեյսբուքյան էջ՝ քոլեջն իր գործունեության վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն չի տրամդրում՝ սահմանափակվելով ընթացակարգերի, կանոնակարգերի, հաշվետվությունների տեղադրմամաբ և սակավ հրապարակումներով։

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ քոլեջում կառավարման մակարդակում առկա չէ կառավարչական գործընթացները կանոնակրագող առանձին փաստաթղթային հենք, գնահատված չեն միջազգային կրթության ներդրման և գործառնական ռիսկերը, առկա է կառավարման համակարգի արդյունավետության խնդիր՝ երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումներ չկան, սահմանված չեն քոլեջի զարգացման նպատակային ցուցանիշները, առկա չեն կառավարչական գործընթացների գնահատման և մշտադիտարկման գործիքներ, ՊԻԳԲ շրջափուլը ներդրված չէ, ռազմավարական պլանավորումը տարածելի չէ ՄԿԾ-ների իրականացման նկատմամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

## III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:**

**Փաստեր**: Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջն ունի լիցենզիաներ և իրականացնում է 4 կրթական ծրագրեր՝ «Քույրական գործ», «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն» և «Ատամնատեխնիկական գործ»: «Մանկաբարձական գործ» ՄԿԾ-ում ընդունելություն ներկայումս չի իրականացվում: Բժշկական քոլեջում ընդունելությունը կատարվում է միջնակարգ (2-3 տարի) և հիմնական ընդհանուր (3-4 տարի) կրթության հիմքի վրա: Պետք է նշել, որ քոլեջի առաքելությունը շատ ընդհանրական է և տեսանելի չէ առաքելության և միջին մասնագիտական կրթության առանցքային կապը՝ որպես «Պրոգրես» կրթահամալիրի առաձին ստորաբաժանում: Ներկայումս քոլեջում կրթություն է ստանում 36 ուսանող, որոնցից 12-ը օտարերկրյա ուսանողներ են:

Քոլեջում կրթությունն իրականացվում է պետական կրթական չափորոշիչների (ՊԿՉ)-ների հիման վրա, 2022թ. -ին քոլեջը անցում է կատարել մոդուլային ծրագրերի, որոնք հիմանականում նույնությամբ տեղայնացվել են: «Քույրական գործ» և «Դեղագործություն» ՄԿԾ-ների առանձին մոդուլներում միայն կատարվել են ուսումնառության արդյունքների լրացումներ, որոնք ներառված են եղել առարկայական ծրագրերում, օրինակ՝ «Ֆարմակագնոզիա» մոդուլում ավելացվել է լրացուցիչ բուսատեսակների և դրանց եռալեզու անվանումների իմացությունը: Ուսումնական պլանով նախատեսված պահուսատային ժամերը և նախասիրական առարկաները չեն իրականացվում, ընտրովի առարկաներ ներդրված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուները ՄԿԾ-ների կազմման և վերանայման գործընթացներին անմիջական մասնակցություն չեն ունենում:

Ըստ «Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ուսանողների պրակտիկայի կանոնակարգի»՝ իրականացվում են հետևյալ 3 պրակտիկաները՝ տեսական ուսուցմամբ (4-6 շաբաթ տևողությամբ 1-ին կուրսում, կրում է ճանաչողական բնույթ), առանց տեսական ուսուցման (3-10 շաբաթ տևողությամբ, 2-րդ և 3-րդ կուրսերում, նախատեսվում է տեսական գիտելիքների գործնական ամրապնդում մասնագիտական առարկաների գծով) և նախաավարտական (3-6 շաբաթ տևողությամբ, կազմակերպվում է ուսուցման լրիվ տեսական դասընթացն ավարտելուց հետո) : Ըստ կանոնակարգի՝ «պրակտիկայի կազմակերպումը և

ղեկավարումն իրականացնում են բժշկական քոլեջը և բազային ձեռնարկությունը»: Քոլեջի կողմից նշանակվում է պրակտիկայի ղեկավար, իսկ գործատուի մոտ պրակտիկան համակարգում է բուժքույրը, դեղատան աշխատակիցը և ատամնատեխնիկական լաբորատորիայի աշխատակիցը: 3 ՄԿԾ-ների գծով առկա են պրակտիկայի ծրագրեր, որտեղ ներկայացված է պրակտիկայի նպատակը, տևողությունը, կատարման ընթացքում և ձեռքբերվող հմտությունները, որոնք հիմնականում համապատասխանում են ՄԿԾ-ների վերջնարդյունքներին: Պրակտիկաներն իրականացվում են բժշկական կենտրոնում, ատամանտեխնիկական լաբորատորիայում և դեղատներում:

Քոլեջում առկա չէ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր դասախոս ինքն է ընտրում իր դասավանդման մեթոդները: Այս տեսանկյունից ինստիտուցիոնալ մոտեցում չի ցուցաբերվում: Դասալսումներից պարզ դարձավ, որ ուսումնառության նյութը հիմնականում թելադրվում է կամ երբեմն տրամադրվում է նախապես: Օտարերկրյա ուսանողների համար հիմնականում առկա չէ օտարալեզու գրականություն և ուսումնառության նյութեր, ուսումնառության նյութը տրամադրվում է թելադրության միջոցով, ինչը տվյալ պահին անգլերեն է թարգմանվում թարգամնչի օգնությամբ: Պետք է նշել, որ օտարերկրյա ուսանողների համար համապատասխան օտարալեզու գրականության ձեռքբերումը և ուսումնառության նյութերի պատրաստումը քոլեջում դեռևս առաջնահերթություն չի դիտարկվում:

«Դեղագործություն» ՄԿԾ-ում կիրառվում են վիդեոդասեր, իրականացվում են քննարկումներ, սեմինարներ: «Ատամանտեխնիկական գործ» ՄԿԾ-ում տեսական նյութը քննարկվում է դասախոսի հետ լսարանում, գործնական պարապմունքներն անց են կացվում ատամնատեխնիկական լաբորատորիայում, որի ընթացքում ուսանողները պատրաստում են տարբեր տեսակի ատամնաշարեր: Գործնական դասերի ընթացքում դասախոսն արձագանքում է ուսանողի մոտ առաջ եկած խնդիրներին՝ ցուցաբերելով անհատական մոտեցում: «Քույրական գործ» ՄԿԾ-ում պրակտիկ բժիշկ-դասախոսը ուսանողների գործնական դասերը երբեմն անց է կացնում Գյումրի բժշկական կենտրոնի դահլիճում՝ ցուցադրելով վիդեոներ, դասախոսություններ և սահիկաշարեր մանրէաբանության վերաբերյալ: Գործնական կարողություններ ձեռք բերելու նպատակով ուսանողները երբեմն կցվում են դասախոսին և մասնակցում հիվանդանոցի բժիշկների և քույրերի կողմից կատարվող աշխատանքներին, նշվածն իր արտացոլումը չի գտնում ուսումնական պլաններում:

Թվով քիչ դասախոսներ ունեն դասի պլաններ, որոշ առաջադրանքներ, որոնք ամբողջությամբ ծածկում են մասնագիտական մոդուլների սահմանված արդյունքների ձեռքբերումը:

Քոլեջում առկա չէ ուսանողների գնահատման քաղաքականություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գնահատումն իրականացվում է 10 բալանոց համակարգով, հստակ սահմանված չեն այն չափանիշները, որոնցով գնահատվում են արդյունքները:

Քոլեջում մշակված է «Գյումրիի «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի կուրսային քննությունների և ստուգարքների կազմակերպման և վերահսկման կանոնակարգը», սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները ռեֆերատներ և կուրսային աշխատանքներ գրում են կամավորության սկզբունքով՝ ուսանողների և դասախոսների ցանկությամբ: Կուրսային աշխատանքները գնահատվում են առանձին և հաշվի են առնվում մոդուլի վերջնական գնահատման ընթացքում, այն իրենից առանձին գնահատական չի ենթադրում: Որոշ դասընթացների կուրսային աշխատանքների և ռեֆերատների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք հիմնականում նկրագրողական բնույթի աշխատանքներ են, բացակայում են վերլուծությունները, եզրահանգումները, գնահատումները: Որոշ ախատանքներում կցված են գրականության ցանկ: «Ատամնատեխնիկական գործ» ՄԿԾ-ում ուսանողները որպես առաջադրանքներ պատրաստում են տարբեր ատամնաշարեր, որոնցից յուրաքանչյուրի իրականացման համար միջինում ստանում են 5-8 առաջադրանք: Իրականցվում է ձևավորող գնահատում, արդյունքը պատրաստի ատամնաշարն է: Ռեսուրսները և նյութերը տրամադրվում են գործատուի կողմից:

«Դեղագործություն» ՄԿԾ-ի շրջանակներում հիմնականում կիրառվում են աստիճանական բարդացող թեստեր (մեկ ճիշտ պատասխանով թեստեր, բաց հարցեր և այլն), որը նպաստում է տեսական գիտելիքների ամրապնդմանը: Որոշ պրակտիկ դասախոսների կողմից հանձնարարվում են ճիշտ և սխալ դեղատոմսերի տարբերակման առաջադրանքներ քայլերի հաջորդականությամբ: Առաջադրանքը կատարվում է լսարանում և իրականացվում է խմբային քննարկման միջոցով: Գործնական աշխատանքների ընթացքում քիմիական նյութերի բացակայության դեպքում ուսանողները փորձարկումներին ծանոթանում են վիդեո-դասերի միջոցով, այնուհետև քայլերը ներկայացնում են բանավոր: Ընդհանուր առմամբ, որոշ մասնագիտական վերջնարդյունքներ, ինչպիսիք են դեղատնային և գործարանային պայմաններում տարբեր դեղաձևերի պատրաստումը, չեն ապահովվում: «Դեղագործություն» ՄԿԾ-ում ուսումնառող որոշ ուսանողներ կամավորության սկզբունքով արտադրական պրակտիկայի շրջանակերում այցելել և ծանոթացել են տարածաշրջանում աճող դեղաբույսերին, պատրաստել են հերբարիումներ, որոնք կիրառվում են ուսումնական գործընթացում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հերբարիումների պատրաստումը ոչ բոլոր կուրսերում է իրականացվում:

«Քույրական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում որոշ մոդուլներ իրականացվում են ցիկլային դասընթացների ձևով (երբ ՄԿԾ-ի մեկ դասընթացը կամ մոդուլը ինտենսիվորեն ուսումնասիրվում է կարճ ժամանակահատվածում, օրինակ՝ մեկ օրվա ընթացքում մոդուլի 3-ժամյա ուսումնասիրություն), ինչը հիմնականում հարմարեցվում է բժիշկ-դասախոսների զբաղվածության հետ:

Ընթացիկ գնահատումը հիմնականում իրականացվում է թեստերի և բանավոր հարցման միջոցով: Քոլեջում իրականցվում են պարզագույն մանիպուլիացիաներ՝ ջերմաչափում, զարկերակային ճնշման չափում, լարանի տեղադրում և այլն, որոնք նպաստում են որոշակի գործնական կարողությունների ձևավորմանը, սակայն առավել բարդ

մանիպուլացիաներ չեն իրականցվում, օրինակ՝ միջմկանային, ներերակային ներարկում, հիվանդի խնամքի կազմակերպում: Ուսանողները դրանց ծանոթանում են բժշկական կենտրոնում: «Քույրական գործ» ՄԿԾ-ում երբեմն վերջնարդյունքի ձևավորման ընթացքում խզված է տեսականի և պրակտիկայի միջև կապը, քանի որ տեսական նյութը տրամադրվում է քոլեջում, իսկ գործնական կարողությունը՝ պրակտիկայի ընթացքում, հիվանդանոցում: Քոլեջի դասախոսի և պրակտիկան անցկացնող աշխատակցի միջև հաղորդակցում առկա չէ:

Պրակտիկաները գնահատվում են 10 բալային համակարգով պրակտիկայի օրագրերում ներկայացվող հաշվետվությունների միջոցով: Առկա չեն պրակտիկայի գնահատման հստակ չափանիշներ, գնահատումն իրականացվում է գործատուի և քոլեջի կողմից ներակայացվող բնութագրի և ուսանողի կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա: Հաշվի են առնվում նաև պրակտիկայի ընթացքում ներկայությունները և ակտիվությունը: Օրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողներիի կողմից ներկայացված տեղեկատվությունը բառացի նույնն է: Մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ «Քույրական գործ» ՄԿԾ-ի պրակտիկայի ընթացքում այն ուսանողները, որոնք ունեն որոշ վախեր բժշկական միջամտություններից, կարող են միայն դիտել գործողությունները և միջամտություններ չիրականացնել:

Առկա է «Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի մասնագիտական ավարտական քննությունների կանոնակարգ»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Մասնագիտական ավարտական քննություններն իրականացվում են բանավոր՝ մասնագիտական պետական որակավորման հարցաշարերի հիման վրա: Հարցարշարերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք հիմնականում տեսական գիտելիքներ ստուգող հարցեր են, իսկ գործնական կարողությունները չեն ստուգվում: Քննությունից հետո տրվում է մասնագիտական պետական քննական հանձնաժողովի կարծիք, ինչը ներկայացվում է ստանդարտ նմուշի վրա, որտեղ քննության ընթացքը և եզրակացությունը բառացի նույն շարադրանքն է բոլոր կրթական ծրագրերի համար և առաջարկություններ նշված չեն: Բողոքարկման մշակված կարգ քոլեջում առկա չէ: Ակադեմիական ազնվության քաղաքականություն և սկզբունքներ քոլեջում ներդրված չեն: Գրագողությունը ստուգվում է դասախոսների կողմից:

Քոլեջի ՄԿԾ-ների համեմատական վերլուծության (բենչմարքինգ) քաղաքականություն և ընթացակարգեր մշակված չեն: Բենչմարքինգ չի իրականացվել: Ուսանողների և դասախոսների շարժունության դեպքեր առկա չեն:

Քոլեջում առկա չեն ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման քաղաքականություն և մեխանիզմներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ների մշտադիտարման միակ գործիքը դասալսումն է: Ընդ որում, արձանագրված դասալսումներ առկա են միայն փոխտնօրենի կողմից, սակայն դրանք չեն վերլուծվում և հիմք չեն ծառայում ծրագրի կարիքը բացահայտելու և բարելավումներ իրականացնելու համար: Հարցումներ չեն իրականացվում, վեր չեն հանվում ուսանողների և գործատուների կարիքները ՄԿԾ-ներում բարելավումներ իրականացնելու համար:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ՄԿԾ-ները ընդհանուր առմամբ համապատասխանում են ՊԿՉ-ներին: Դրական է, որ վերջին մեկ տարվա ընթացքում քոլեջին հաջողվել է ուսումնական գործընթացում ներգրավել նաև օտարերկրյա ուսանողների, այնուամենայնիվ փորձագիտական խումբն այս ուղղությամբ տեսնում է մի շարք ռիսկեր՝ կապված նրանց ուսումնառության արդյունավետ կազմակերպման հետ:

Քոլեջը առարկայական ծրագրերից վերջերս է անցում կատարել մոդուլային ծրագրերով ուսուցման, սակայն մոդուլային ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխան դասընթացների պլանները ամբողջությամբ մշակված չեն: Ուսումնական պլանով նախատեսված նախասիրական և ընտրովի առարկաները չեն դասավանդվում, իսկ պահուստային ժամերը չեն օգտագործվում, փորձագիտական խումբը գտնում է, որ դրանց կիրառումը կարող է նպաստել ինչպես հիմնական կրթական ծրագրի ամբողջականացմանը, այնպես էլ ուսանողակենտրոն ուսուցմանը:

Մտահոգիչ է, որ ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացում գործատուները ֆորմալ առումով ակտիվ մասնակցություն չեն ունենում, այնուամենայնիվ որոշ պրակտիկ, գործատու դասախոսների ներգրավման արդյունքում կրթությունը որոշակիորեն կազմակերպվում է գործատուների բազաներում և գործատուների ուղղորդմամբ, որի ընթացքում որոշակիորեն հաշվի են առվում նաև գործատուների կարիքները: Փորձագիտական խումբը կարևորում է, որ գործնական ժամերի կազմակերպումը գործատուների բազաներում նույնպես արտահայտված լինեն կրթական ծրագրում, որը հնարավորություն կընձեռի գործնական ժամերի կանոնակարգված կազմակերպմանը և կրթական ծրագրի առավելությունների տեսանելիության բարձրացմանը:

Քոլեջում դասախոսներն ազատ են դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հարցում, այս տեսանկյունից առանձին մասնագետներ կիրառում են ուսումնառության տարբեր ժամանակակից մեթոդներ, որոնք՝ որպես դրական փորձ, չեն տարածվում քոլեջում դասավանդող այլ դասախոսների շրջանում: Փորձագիտական խումբը գտնում է, որ լավ փորձերի ուսումնասիրությունը և դրանց քաղաքականության վերածումը կարող է նպաստել ուսանողներին գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգված և թիրախային փոխանցմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ դասի պլանների, առաջադրանքների շտեմարանների առկայությունը կնպաստի ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների նպատակային և համակարգված ձեռքբերմանը:

Խնդրահարույց է լսարանում թելադրությունների միջոցով գիտելիքի փոխանցումը, մասնավորապես այն դեպքում, երբ օտարերկրյա ուսանողների համար զուգահեռաբար թարգմանություն է տեղի ունենում, դա կարող է հանգեցնել լսարանում տեղեկատվության փոխանցման տեսանկյունից ժամանակի կորստի, քննարկումների նվազման, հետևաբար նաև քննադատական մտքի ձևավորման և ՄԿԾ-ի արդյունավետ իրականացման խաթարմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ օտարերկրյա ուսանողներին համապատասխան օտարալեզու մասնագիտական գրականությամբ և ուսումնառության նյութերով ապահովելը

քոլեջի համար հրատապ է, հակառակ պարագայում կարող է վտանգվել ՄԿԾ-ով սահմանված բոլոր վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերումը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում «Ատամնատեխնիկական գործ» ծրագրում գործնական աշխատանքների ընթացքում ուսանողներին անհատական մոտեցումը, ինչը նպաստում է գործնական հմտությունների ձևավորմանը։ Ավելին, գործնական պարապմունքների և պրակտիկաների իրականացումը անմիջապես բժշկական հաստատություններում, ատամնատեխնիկական լաբորատորիաներում և դեղատներում նպաստում է իրական դեպքերի հիման վրա ուսանողների մասնագիտական հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը։

Խնդրահարույց է ուսանողների գիտելիքների և կարողությունների գնահատման քաղաքականության և հստակ չափանիշների բացակայությունը, իսկ բողոքարկման կարգի բացակայությունը գնահատման չափանիշների բացակայության հետ մեկտեղ կարող է բացասաբար ազդել ուսանողների գնահատման արժանահավատության և հուսալիության վրա։ Կուրսային աշխատանքների և ռեֆերատների կամավոր կատարումը կարող է հանգեցնել ոչ բոլոր ուսանողների մոտ գրականության վերլուծության հմտությունների զարգացմանը։

Մտահոգիչ է նաև, որ ամփոփիչ քննություններին ստուգվում են միայն ուսանողների տեսական գիտելիքները, իսկ գործնական հմտություններին անդրադարձ չի կատարվում, գործնական կարողությունները («Քույրական գործ», «Դեղագործություն») հիմնականում գնահատվում են պրակտիկաների ընթացքում։ Եթե հաշվի առնենք, որ երբեմն տեսական, գործնական և պրակտիկան իրականացնող մասնագետների միջև հաղորդակցությունը բացակայում է (հիմնականում «Քույրական գործ» ՄԿԾ-ի որոշ մոդուլներում), առկա է ռիսկ, որ ուսանողների գործնական հմտությունների ձեռքբերումը կարող է լինել ոչ ամբողջական։

Փորձագիտական խումբն իր անհանգստությունն է հայտնում նաև առ այն, որ ուսանողների պրակտիկաների օրագրերում ներկայացված աշխատանքները բառացի կրկնվում են տարբեր ուսանողների մոտ, բացի այդ բացակայում են պրակտիկաների գնահատման հստակ չափանիշները, արդյունքում ռիսկային է դիտարկվում դրանց արդյունավետությունը։

Մտահոգիչ է ՄԿԾ-ների համեմատական վերլուծության (բենչմարքինգ) բացակայությունը տեղական և միջազգային այլ բժշկական քոլեջների համանուն ՄԿԾ-ների հետ։ Դա կնպաստի ինչպես լավագույն փորձի բացահայտմանը, այնպես էլ մոդուլային ծրագրերի արդյունավետ ներդրմանը։ Բացի այդ, օտարերկրյա ուսանողների ներգրավման տեսանկյունից այլ երկրների բժշկական քոլեջների ՄԿԾ-ների ուսումնասիրումը և դրանց առաջավոր փորձի ներմուծումը համադրելի կդարձնեն կրթական վերջնարդյունքները համաշխարհային բժշկական մոտեցումների և պահանջների հետ։

ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ համակարգված հարցումների և մշտադիտարկման բացակայությունը խոչընդոտում է ՄԿԾ-ների գնահատման, բարելավման ուղղությունների պարզաբանման և ՄԿԾ-ների մրցակցային հնարավորությունների բարձրացման գործընթացների իրականացումը։

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում գործատուները չունեն ֆորմալ մասնակցություն, կրթական ծրագրում առկա լավ փորձը տեղ չի գտնում ուսումնական պլաններում, առկա չէ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական քաղաքականություն, օտարերկրյա ուսանողներին չեն տրամադրվում ուսումնառության նյութեր, դասավանդման հիմնական մեթոդը թելադրություններն են, առկա չեն ուսանողների տեսական գիտելիքների և գործնական կարողությունների գնահատման չափանիշներ, բողոքարկման կարգ, անկատար են ՄԿԾ-ների համեմատական վերլուծության (բենչմարքինգ) և արդյունավետության գնահատման գործընթացները, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը չի բավարարում չափանիշ 3-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

## IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:**

**Փաստեր**: Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը ուսանողների հավաքագրման նպատակով այցեր է կազմակերպում մարզային դպրոցներ, դիմորդներին բաժանում է տեղեկատվական թռուցիկներ, որոնց մեջ ներկայացված են քոլեջի մասնագիտությունները, տեղեկատվություն ընդունելության քննությունների, ուսման տևողության և վարձավճարների մասին: Ընդունելության մասին տեղեկատվություն է տարածվում նաև քոլեջի ֆեյսբուքյան էջով: Կազմակերպվել են նաև բաց դռների օրեր, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին տարիներին բաց դռների օրեր չեն կազմակերպվում: Քոլեջը չի գնահատել իրականացված միջոցառումների արդյունավետությունը:

Տեղացի ուսանողների ընդունելության դիմում-հայտերը ներկայացվում են առցանց՝ dimord.am կայքէջի միջոցով: Ընդունելության քննությունները կազմակերպվում են քոլեջի կողմից, բոլոր ՄԿԾ-ների շրջանակներում դիմորդները հանձնում են բանավոր քննություն կենսաբանություն առարկայից, նվազագույն շեմը հաղթահարած դիմորդներն ընդունվում են քոլեջ: Պետք է նշել, որ 2022-2023 ուստարում քոլեջը ներգրավել է նաև օտարերկրյա 12 ուսանողների: Նրանց ընդունելությունն իրականացվում է Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարազգի քաղաքացիների ընդունելության կարգով: Օտարերկրյա դիմորդները քոլեջում

հանձնում են անգլերեն լեզվով բանավոր քննություն կենսաբանություն առարկայից, և կրկին նվազագույն շեմը հաղթահարածներն ընդունվում են: Այս ուսանողների համար կրթությունը կազմակերպվում է հայերեն լեզվով՝ զուգահեռ անգլերեն թարգմանությամբ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և օտարերկրյա ուսանողների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նրանց մեծ մասն ունի անգլերեն լեզվի իմացության ցածր մակարդակ:

Քոլեջն ունի նաև ուսանողներ, որոնք ընդունվել են «Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգի» համաձայն, այդ ուսանողներն ունեն բարձրագույն կրթություն և քոլեջում ստանում են իրենց երկրորդ մասնագիտությունը, ներկայումս սովորող ուսանողներից 2-ի բարձրագույն կրթությունը բժշկական ուղղվածությամբ չէ, այդ ուսանողները հանձնել են տարբերություն 8 մոդուլից և շարունակում են կրթությունը «Դեղագործություն» կրթական ծրագրի վերջին կուրսում, պետք է շեշտադրել որ նման դեպքերի արդյունավետության գնահատում քոլեջը չի իրականացրել:

Վերջին 1 տարվա ընթացքում նկատվում է ուսանողների թվի աճ, 2020թ. քոլեջն ունեցել է 27 ուսանող, 2021թ.՝ 13, իսկ 2022թ.՝ 32: Պետք է փաստել, որ ուսանողների թվի աճը պայմանավորված է օտարերկրյա ուսանողների ներգրավվմամբ:

Հարկ է նշել, որ մարզում գործող մյուս բժշկական ուսումնական հաստատությունների վարձավճարների համեմատ, ԳՊՀ բժշկական քոլեջում կրկթությունը համեմատաբար մատչելի է:

Քոլեջում գործում է «Պրոգրես համալսարանի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կարգը», որը տարածվում է նաև քոլեջի վրա: Կարգում ներկայացված է, որ ամեն տարի պետական քննություններից առաջ և քննաշրջանի ավարտից հետո պետք է իրականացվեն հարցումներ, որոնք, ըստ կարգի, ուսանողության ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ուսանողների կրթական կարիքները վերհանող հարցումներ տեղի չեն ունեցել: Կրթական կարիքների բացահայտման նպատակով գործում է կուրսղեկների ինստիտուտը, առաջացած խնդիրների դեպքում ուսանողներն առաջնային դիմում են նրանց: Խնդիրները հիմնականում տեխնիկական բնույթ են կրել: Ուսումնառության ընթացքում առաջ եկած խնդիրներով դիմում են նաև տվյալ առարկայի դասախոսին, օրինակ՝ խնդրելով լրացուցիչ ուսումնառության նյութեր, ինչպես նաև օժանդակելով մասնագիտական գրականության կողմնորոշման և ձեռքբերման հարցերում:

Լրացուցիչ պարապմունքներ ուսանողների համար քոլեջում չեն կազմակերպվում, սակայն ուսանողները հնարավորություն ունեն հավելյալ ժամանակ անցկացնելու ուսումնական բազաներում (ատամնատեխնիկական լաբորատորիայում, հիվանդանոցում և դեղատներում)՝ ամրապնդելով գործնական կարողությունները: Քոլեջում առանձնացված են ուսանողների համար խորհրդատվական ժամեր քննարշրջանից առաջ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հաճախ չեն դիմում խորհրդատվություններ ստանալու համար, բացառությամբ «Դեղագործություն» կրթական ծրագրի ուսանողների: Քոլեջում

խորդատվություններ կարող են ստանալ նաև բացակայած ուսանողները, դրանք պարտադիր կամ կանոնակարգված բնույթ չեն կրում: Մատյանների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների բացակայությունները հաճախակի են:

Քոլեջում սահմանված են ռեկտորի մոտ ընդունելության հստակ օրեր և ժամեր, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները կաշկանդված չեն ռեկտորին դիմելու հարցում, ռեկտորին հիմնականում դիմում են վարձավճարների զեղչման հարցերով և ստանում են դրական արձագանք: Առկա են զեղչերի տրամադրման դեպքեր (պատերազմի մասնակից, սոցիալապես անապահով ուսանողներ, 3 և ավելի ուսանողների առկայություն 1 ընտանիքից և այլն), թույլ է տրվում նաև վարձի մասնակի վճարում: Այս գործընթացները հստակ փաստաթղթային կանոնակարգում չունեն: Վարչական անձնակազմի մյուս անդամներին դիմելու համակարգված մեխանիզմ առկա չէ, սակայն ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, ուսանողներն ազատ են ցանկացած ժամի դիմելու նրանց: Ներգաբավված օտարերկրյա ուսանողները խնդիրների դեպքում հիմնականում դիմում են ուսումնական գծով փոխտնօրենին:

Կարիերայի աշխատանքների գծով պաշտոնական պատասխանատու այս պահին քոլեջում առկա չէ, սակայն որոշ գործառույթներ իրականացվում են ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, գործավարուհին և Որակի վարչության պետը: Ուսանողների CV-ների կազզման աշխատանքներով զբաղվում է գարծավարուհին, Կարիերայի ուղեցույցների կազմամբ՝ Որակի վարչության պետը, իսկ շրջանավարտների տվյալները հավաքագրվում են ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից: Պետք է նշել, որ ուսանողների զբաղվածության բազայի ձևավորումը նոր գործընթաց է, որպես այդպիսին դեռևս առկա չէ ամբողջական և ընդրգրկում բազա: Ըստ ներկայացված տվյալների՝ 2022թ. 22 շրջանավարտներից 6-ն (մոտ 30%) աշխատում են իրենց մասնագիտությամբ, որոշ շրջանավարտների հետ կապ հաստատված չէ, նրանց մասին տեղեկատվություն առկա չէ: Կարիերային ուղղված գործընթացները պլանավորված և համակարգված չեն:

Ինստիտուցիոնալ մակարդակում ուսանողները ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ դասընթացների շրջանակներում ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ, կազմվում են հերբարիումներ և այլն: ՈւԽ-ի կազմակերպած միջոցառումների շրջանակներում ուսանողները երբեմն ներգրավվում են ստեղծագործական միջոցառումներում, օրինակ՝ Եղիշե Չարենցի մասին տեսասկավառակի ստեղծում և տարածում:

Քոլեջում ուսանողների իրավունքների պաշտպանության նպատակով գործում է Ուսանողական խորհուրդ, որը գործում է Պրոգրես համալսարանի Ուսանողական խորհրդի կազմում: Քոլեջի ՈւԽ-ում ներգրավված է 12 ուսանող, որից մեկը՝ օտարերկրյա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները խորհրդում ընդգրկվում են ուսանողների և դասախոսների առաջարկությամբ և միջնորդությամբ: Առկա է Պրոգրես համալսարանի ուսանողի ուղեցույց, որտեղ ներկայացված են ուսանողների իրավունքները և պարտականությունները, Ուսանողական խորհրդի կանոնադրությունը և այլն: Պետք է նշել, որ կանոնադրության մեջ նշված չէ, թե ինչ ընթացակարգով են ուսանողները դառնում

ուսանողական խորհրդի անդամ, ներկայացված են նաև կանոնադրական դրույթներ, որոնք այլևս չեն գործում, օրինակ՝ Ուսանողական խորհրդի համագումարի կազմակերպում տարեկան 2 անգամ: ՈւԽ-ն ունի 2022-2023թթ. աշխատանքային պլան, որը վավերացված չէ, պլանավորված գործողությունները չունեն իրականացման հստակ ժամկետներ:
Քոլեջում կրթական, խորհրդատվական և տրամադրված մնացյալ ծառայությունների արդյունավետությունը չի գնահատվում, մեխանիզմներ ներդրված չեն:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է գնահատում դեպի մարզային դպրոցներ «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի իրականցրած այցերը, դրանց ընթացքում տեղեկատվական թռուցիկների տրամադրումը, ինչը հնարավորություն կարող է ընձեռել իրազեկելու դիմորդներին քոլեջի մասնագիտությունների, ընդունելության քննությունների, ուսման տևողության և վարձավճարների մասին: Գովելի է նաև ընդունելության մասին տեղեկատվության տարածումը առցանց հարթակների միջոցով: Դիմորդների հավաքագրման նպատակով իրականացված միջոցառումների արդյունավետությունը գնահատելու պարագայում, քոլեջը հնարավորություն կունենա կատարելագործելու այդ մեխանիզմները և առավել թիրախային գործընթացներ իրականացնելու:

Դրական է գնահատվում վերջին տարում օտարերկրյա ուսանողների ներգրավումը, որը նպաստել է ուսանողների թվաքանակի աճին, այնուամենայնիվ փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը օտարերկրյա ուսանողների համար սահմանի օտար լեզվի իմացության հստակ շեմ, որը թույլ կտա նրանց ուսումնառության հետագա գործընթացն առավել արդյունավետ կազմակերպել:

Չնայած որ բարձրագույն կրթություն ունեցող և իրենց կրթությունը քոլեջում այլ մասնագիտության ավարտական կուրսից շարունակող ուսանողները հանձնում են 8 մոդուլային տարբերություններ, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ բժշկական բազային կրթություն չունենալը և անմիջապես վերջին կուրսում սովորելը կարող է վտանգել նրանց ստացած որակավորման արժանահավատությունը:

Չնայած որ ուսանողների կարիքների վերհանման նպատակով ներդրված է հարցումների անցկացման կարգ, այն պրակտիկայում կիրառություն չի գտնում: Հարցումների պարբերաբար իրականցումը հնարավորություն կստեղծի ուսանողների կրթական կարիքները կանոնակարգված վերհանելու համար: Փորձագիտական խումբը դրական է համարում կուրսղեկների դերը ուսանողների կրթական կարիքների բացահայտման գործում, ինչպես նաև այն, որ ուսանողները ուսումնառության ընթացքում առաջ եկած խնդիրներով դիմում են նաև տվյալ առարկայի դասախոսին, ինչը հնարավորություն է ստեղծում ուսանողների խնդիրների արագ արձագանքման համար:

Չնայած նրան, որ նախատեսված չեն ուսանողների համար լրացուցիչ պարապմունքներ, այնուամենայնիվ ուսանողները հնարավորություն ունեն հավելյալ ժամանակ անցկացնել ուսումնական բազաներում, ինչը խթանում է ուսանողների գործնական կարողությունների զարգացումը:

Փորձագիտական խումբը, հաշվի առնելով քոլեջի բժշկական ուղղվածությունը, շեշտադրում է բացակայած ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների կանոնակարգվածությունը և պարտադիր բնույթ կրելը, որը կնպաստի ուսանողների կողմից բաց թողնված նյութերի լիարժեք ընկալմանը, ինչպես նաև ուսանողների բացակայությունների կրճատմանը:

Գովարժան է այն, որ քոլեջում հստակ սահմանված են ռեկտորի մոտ մտնելու օրեր ու ժամեր, ինչը հնարավորություն է ստեղծում ուսանողներին ավելի կանոնակարգված օժանդակություն և ուղորդում տրամադրել: Փորձագիտական խումբը դրական է համարում նաև այն փաստը, որ ուսանողները կաշկանդվածություն չունեն վարչական աշխատակազմին դիմելու հարցում:

Չնայած նրան, որ ուսանողների կարիերայի զարգացման նպատակով քոլեջում աշխատանքներ տանում են ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, որակի վարչության պետն ու գործավարուհին, փորձագիտական խումբը կարևորում է կարիերայի գծով պաշտոնապես պատասխանատու անձի առկայությունը, ինչը հնարավորություն կստեղծի ուսանողների կարիերայի զարգացմանն ուղղված հստակ միջոցառումների կազմակերպմանը, շրջանավարտների բազայի ձևավորման աշխատանքների կանոնակարգվածության ապահովմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների կանոնակարգված մասնակցությունը հետազատողական աշխատանքներում հնարավորություն կտա զարգացնելու նրանց վերլուծաքննադատական մտածողությունը և տվյալահենք որոշումների կայացման կարողությունները:

Դրական է Ուսանողական խորհրդի՝ որպես ուսանողների շահերի ու իրավունքների պաշտպան մարմնի առկայությունը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ են սահմանելու ՈւԽ անդամների ընտրության հստակ ընթացակարգեր, որոնք թույլ կտան մեծացնելու նաև ՈՒԽ-ի ինքնավարությունը:

Փորձագիտական խումբը շեշտադրում է ուսանողներին տրամադրվող կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների արդյունավետության վերլուծությունն իրականացնելու նպատակով մեխանիզմների ներդրումը, ինչը հնարավորություն կստեղծի կրթական գործընթացների հստակ գնահատման և բարելավման համար:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ ԳՊՀ բժշկական քոլեջում առկա են ուսանողների ներգրավման մեխանիզմներ, վերջին տարում ընդգրկվել են օտարերկրյա ուսանողներ, առկա է ուսանողների իրավունքները պաշտպանող կառույց, ուսանողներին տրամադրվում են որոշ խորհրդատվություններ, առկա է ուսանողների գործնական հմտություններն ամրապնդող հավելյալ հնարավորություն, ուսանողները ազատ են դիմելու վարչական անձնակազմին, գործում են ուսանողների զեղչեր, փորձագիտական խումբը գտնում է, որ Փորձագիտական խումբը Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը **բավարարում է** չափանիշ 4-ի պահանջները:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

## V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:**

**Փաստեր**: Քոլեջում դասախոսական համակազմի համալրման և ընտրության գործընթացները կարգավորվում են «Պրոգրես համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմի ընդունման, ազատման և համալրման կարգով»: Ըստ կարգի՝ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի թափուր պաշտոնի աշխատանքի ընդունման համար հայտարարվում է բաց մրցույթ, հայտարարությունը պետք է հրապարակվի օրաթերթում, ինտերնետային կայքում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնատեղին հավակնող թեկնածուին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման ժամկետները: Կարգում սահմանված չէ, թե ինչպիսի որակական պահանջների պետք է համապատասխանի մրցույթի մասնակիցը, որպեսզի հավակնի դառնալու ուսումնական հաստատության դասախոս: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում փաստացի մրցույթ չի իրականացվել, դասախոսները ընտրվել են հարցազրույցով: Նոր ընդունված դասախոսների մեծ մասն ունեն մանկավարժական փորձառություն և ներգրավված են եղել Պրոգրես կրթահամալիրի համալսարանից և դպրոցից: Նոր ընդունված դասախոսի հետ կնքվում է անժամկետ պայմանագիր: Քոլեջի 3 կրթական ծրագրերը սպասարկում են 26 դասախոս, որոնցից 23-ը հիմնական աշխատակիցներ են: Պրոգրես կրթահամալիրն ունի 22 անձից բաղկացած ուսումնաօժանդակ կազմ, որը սպասարկում է նաև քոլեջը: Ուսումնաօժանդակ կազմը նույնպես ընդունվում է հարցազրույցի միջոցով, առկա չեն հստակ պահանջներ:

Համալսարանում մշակվել են դասախոսի պաշտոնի անձնագիր, որտեղ ներկայացված են նաև դասախոսի իրավունքներն ու պարտականությունները: Պաշտոնի անձնագիրը նույնական է և՛ համալսարանի, և՛ քոլեջի դասախոսների համար:

ՄՈՒՀ-ը կարևորում է պրակտիկ ոլորտից (հիվանդանոց, դեղատուն, ատամնատեխնիկան լաբորոտորիա) մասնագետների ներգրավումը որպես դասախոսներ: Քոլեջում դասավանդում են 7 գործատու դասախոս, 4 դոցենտ և 1 պրոֆեսոր: Պահպանված են ՊԿՉ-ով սահմանված պահանջները, բոլոր դասախոսները համապատասխանում են իրենց որակավորումներին:

Քոլեջի դասախոսական կազմի գնահատումը իրականացվում է «Պրոգրես համալսարանի դասավանդման որակի, արդյունավետության և ուսանողների հարցման կարգի» համաձայն, որտեղ սահմանված են ուսանողների շրջանում հարցման անցկացման, արդյունքների մշակման և պահպանման հստակ ժամանակացույցը և պահանջները: Համաձայն կարգի՝ հարցումներն անանուն են, անցկացվում են յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարգը փաստացի չի գործում: Քոլեջում դասախոսների գնահատումը իրականացվում է դասալսումներով , որոնց արդյունքները գրանցվում են, սակայն չեն վերլուծվում և ամփոփվում: Քոլեջում սկսնակ դասախոսներին օժանդակելու նպատակով տեղի են ունենում փոխադարձ դասալսումներ, տրամադրվում են խորհրդատվություններ:

Քոլեջում դասախոսների մասնագիտական առաջընթացի և կատարելագործման պլանավորումներ չեն իրականացվում, մասնագիտական վերապատրաստումներ չեն իրականացվում: Մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների զգալի մասը պրակտիկ մասնագետներ են և իրենց մասնագիտական զարգացումը ապահովում են իրենց աշխատավայրերում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին 5 տարիների ընթացքում թվով 4 դասախոս մասնակցել է մասնագիտական վերապատրաստումների իրենց նախաձեռնությամբ: Պետք է նշել, որ մոդուլային ծրագրերով դասավանդման անցնելու ընթացքում դասախոսները մեթոդական վերապատրաստումներ չեն անցել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսների մի մասը տեղյակ չեն, որ առարկայական ծրագրերը փոխարինվել են մոդուլայինի:

Քոլեջն ունի մասնագիտական մոդուլները դասավանդող դասախոսական կազմ, դասախոսական կազմը կայուն է, վերջին տարիներին նկատվում է երիտասարդ դասախոսների ներգրավում դասավանդման գործընթացում: Մեկ դասախոսը դասավանդում է մոտ 3-5 առարկաներ/մոդուլներ: Հարկ է նշել, որ անգլերեն լեզվով դասավանդողների քանակը սակավ է:

Քոլեջում չի գործում դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներից մեկը դարձել է քոլեջի փոխտնօրեն, իսկ «Ատամանատեխնիկական գործ» ՄԿԾ-ի 1 շրջանավարտ ներգրավվել է դասախոսական աշխատանքում: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քոլեջում առկա չեն դասախոսական կազմի խրախուսման քաղաքականություն և մեխանիզմներ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ աշխատանքային պարտականությունները լավ կատարած աշխատակիցներին մոտիվացնում են բարոյական խրախուսումների միջոցով:

Քոլեջը համալսարանի կազմում հիմնականում ունի բավարար վարչական և ուսումնաօժանդակ կազմ կրթական գործընթացները կազմակերպելու համար: Կարիերայի պատասխանատուն իր գործառույթներն իրականացնում է հասարակական հիմունքներով, առկա չէ նաև արտաքին կապերի և միջազգայանցման պատասխանատու անձ, որի վրա պաշտոնապես դրված կլինեն նոր գործընկերների ձեռքբերման, նրանց հետ հաղորդակցման, միջազգային կապերի ձևավորման գործառույթներ:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի միտումը մրցութային կարգով դասախոսական և ուսունմաօժանդակ համակազմի համալրման գործում, սակայն քոլեջում դեռևս դասախոսական և ուսունմաօժանդակ անձնակազմի համալրման նպատակով մրցույթ չի իրականցվել, ինչը հնարավորություն կտար տարբերակել հավակնորդների մասնագիտական հատկանիշները: Փորձագիտական խումբը դրական է համարում դասախոսի պաշտոնի անձնագրի առկայությունը, միևնույն ժամանակ հարկ է նշել, որ կրթական ծրագրերի իրականացման շրջանակում դասախոսներին ներկայացվող մասնագիտական պահանջները հստակ չեն: Հստակ պահանջներ մշակելու պարագայում կարող է բարձրանալ կրթական ծրագրերի իրագործման արդյունավետությունը: Գովելի է, որ քոլեջի դասախոսների որակավորումները համապատասխանում են իրենց կողմից դասավանդվող դասընթացներին, զուգահեռաբար՝ պրակտիկ ոլորտից մասնագետներ և գործատուներ են ներգրավվել որպես դասավանդողներ, ինչի արդյունքում զգալիորեն բարելավվել են ուսանողների գործնական հմտություններն ու կարողությունները:

Թեև քոլեջում առկա է դասախոսական կազմի գնահատման կարգ, ուր առանձնացված են ուսանողների շրջանում հարցման անցկացման, արդյունքների մշակման և պահպանման հստակ ժամանակացույցը և պահանջները, այդուհանդերձ նշյալ կարգը փաստացի չի գործարկվում, կարգի գործարկումը հնարավորություն կընձեռեր քոլեջին վերհանելու դասավանդման ընթացքում առկա խնդիրները, և դրանց համարժեք լուծումներ գտնել: Դրական է, որ քոլեջում դասախոսների գնահատման համար իրականացվում են դասալսումներ՝ գրանցելով դասալսումների արդյունքները, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ դասալսումների արդյունքների վերլուծություններն ու ամփոփումները կարող են նպաստել քոլեջում առկա հաջողված փորձերի տարածմանն ու առկա խնդիրների լուծմանը: Դրական միտում է քոլեջի սկսնակ դասախոսներին օժանդակելու նպատակով փոխադարձ դասալսումների կազմակերպումը, որի արդյունքում սկսնակ դասախոսներին տրամադրվում են խորհրդատվություններ՝ խթանելով քոլեջում առկա լավ փորձի տարածումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարիք ունի դասախոսների համար մասնագիտական և մոդուլային ծրագրերով դասավանդմանն անցնելու պարագայում նաև մանկավարժական վերապատրաստումներ իրականացնելու, որի արդյունքում կբարելավվի ուսուցման արդյունավետությունը: Ի լրումն վերոնշյալի՝ քոլեջում մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների զգալի մասը պրակտիկ ոլորտից են և սեփական նախաձեռնությամբ կամ, պայմանավորված աշխատավայրերում ներկայացված պահանջներով, կատարելագործում են իրենց մասնագիտական կարողությունները և նպաստում են ուսանողների մոտ գործնական հմտությունների ձևավորմանը և ամրապնդմանը:

Փորձագիտական խումբն արժևորում է կրթական գործընթացում երիտասարդ դասախոսներ ներգրավելու և դասախոսական կազմը երիտասարդացնելու, ինչպես նաև պրակտիկ ոլորտից դասախոսներ ներգարվելու քոլեջի նպատակադրումը՝ նպաստելով

դասախոսական կազմի կայունության ապահովմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ օտարերկրյա ուսանողների ներգրավումը հրատապ է դարձրել անգլերեն լեզվով դասավանդողների ներգրավումը, որը կնպաստի նրանց ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

Թեև քոլեջը չի մշակել դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն, սակայն գովելի է, որ քոլեջում փաստացի առկա են դասախոսական կազմի առաջընթացի դեպքեր: Միևնույն ժամանակ քոլեջում աշխատանքային պարտականությունները լավ կատարած աշխատակիցները խրախուսվել են պատվոգրերով, սակայն փորձագիտական խումբը կարևորում է խրախուսման լրացուցիչ մեխանիզմների առկայությունը, որոնք կնպաստեն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մոտիվացիայի բարձրացմանը:

Դրական է, որ քոլեջը համալսարանի կազմում ունի բավարար վարչական և ուսումնաօժանդակ կազմ կրթական գործընթացներն իրականացնելու համար, սակայն հարկ է առանձնացնել, որ քոլեջի համար կարևոր այնպիսի հաստիքներ, ինչպիսիք են՝ կարիերայի պատասխանատու, արտաքին կապերի և միջազգայանցման պատասխանատու, առկա չեն, այդ գործառույթներն իրականացնում են տարբեր աշխատակիցներ հասարակական կարգով: Փորձագիտական խումբը գտնում է, որ նշյալ հաստիքների առկայությունը կնպաստի ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը և կարիերայի զարգացմանը միտված աշխատանքներին, արտաքին կապերի համալրմանը ու միաջազգայնացման գործընթացի արդյունավետությանը:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ դասախոսների որակավորումները համապատասխանում են դասավանդվող դասընթացներին, դասավանդման գործընթացում ներգրաված են պրակտիկ ոլորտից մասնագետներ և գործատուներ, ներդրված են դասախոսական կազմի երիտասարդացման մեխանիզմներ, քոլեջի սկսնակ դասախոսներին տրամադրվում է օժանդակություն, առկա են մասնագիտական առաջընթացի դեպքեր, կրթական գործընթացներն ապահովված են բավարար վարչական և ուսումնաօժանդակ կազմով, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

## VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:**

**Փաստեր**: ԳՊՀ-ի բժշկական քլեջն իր կրթական գործունեության իրականացման շրջանակում հետազոտությունը որպես առաջնահերթություն չի սահմանել, առկա չեն հետազոտության ոլորտում քոլեջի նպատակադրումները, խնդիրները: Հարկ է նշել, որ այս ոլորտում պլանավորված գործողություններ ևս չկան և տեսանելի չեն հետազոտության զարգացման հեռանկարները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հետազոտությունը քոլեջի կողմից չի ընկալվում որպես ուսանողի վերլուծական, ստեղծագործական, քննադատական կարողություններ ձևավորելու միջոց:

Քոլեջի գործող որոշ բժիշկ դասախոսներ իրենց աշխատանքային գործունեության շրաջանակում մասնակցում են տեղական և միջազգային կոնֆերանսների, ունեն հրապարակումներ, գիտական հոդվածներ: Գործող բժիշկ մասնագետները ներգրավված են եղել ուսումնական ձեռնարկների մշակման աշխատանքային խմբերում, օրինակ՝ «Քույրական գործ» ՄԿԾ-ի համար 2018թ. մշակված «Ինֆեկցիոն հիվանդությունների և կենսանվտանգության հիմնահարցերը» ձեռնարկը: Պետք է նշել, որ վերոնշյալ լավ փորձերը դասախոսների անհատական նախաձեռնողականության արդյունք են և նման դասախոսները սակավաթիվ են:

Քոլեջի ՄԿԾ-ների շրջանակներում որոշ դասախոսներ ուսանողներին առաջարկում են հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքներ պաստառների, ռեֆերատների և կուրսային աշխատանքների տեսքով, այդ աշխատանքներն իրականացվում են ուսանողների կամավորության սկզբունքով, արդյունքները հաշվի են առնվում միայն մոդուլի արդյունքներն ամփոփելիս: Առկա չեն կուրսային աշխատանքների և ռեֆերատների գնահատման հստակ պահանջներ և չափանիշներ: Որպես օրինակ կարելի է առանձնացնել՝ «Դեղագործություն» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ներկայացնում են հերբարիումներ, կազմում ռեֆերատներ՝ Թմրամոլության, Դեղաձևերի դեղատնային տեխնոլոգիայի, Հակաբիոտիկների և այլ թեմաների վերաբերյալ: «Քույրական գործ» կրթական ծրագրի շրջանակներում կազմած ռեֆերատներ են՝ Լեյկոզներ, Սիրտ-անոթային համակարգ, Հակահամաճարակային միջոցառումներ թեմաներով: Աշխատանքներում առկա է գրականության ցանկ, սակայն վերլուծական բաղադրիչը և ինքնուրույն մոտեցումը հիմնականում բացակայում է:

Քոլեջի դասախոսները հիմնականում հետազոտություններ չեն իրականացնում և իրենց ոլորտի միջազգային փորձը չեն ուսումնասիրում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջազգայնացմանը միտված գործընթացներով պայմանավորված՝ քոլեջի դասախոսները նախատեսել են առաջիկայում ուսումնասիրել միջազգային փորձը, որի հետ կապված քոլեջը դեռևս պլանավորումներ չունի: Պետք է նաև նշել, որ քոլեջում ներդրված չեն հետազոտական աշխատանքներ իրականացնելու խրախուսման մեխանիզմներ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածությունը քոլեջում երբեմն արտահայտվում է դասավանդման գործընթացում դասախոսական կազմի կողմից մշակված ուսումնական ձեռնակների կիրառմամբ։

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարվում, որ քոլեջի որոշ գործող բժիշկ դասախոսներ մասնակցում են տեղական և միջազգային կոնֆերանսների, ունեն հրապարակումներ և գիտական հոդվածներ, ներգրավված են եղել ուսումնական ձեռնարկների մշակման աշխատանքային խմբերում, սակայն նշյալ գործընթացներին քոլեջը չունի որևէ մասնակցություն և դասախոսներն իրականացրել են իրենց սեփական նախաձեռնողականությամբ՝ պրակտիկ աշխատանքային գործունեության կարիքի շրջանակում: Արդյունքում վտանգված է հետազոտության զարգացումը։

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջի համար հետազոտությունը որպես կրթական գործունեության առաջնահերթություն չի դիտարկվում, զուգահեռաբար՝ սահմանված չեն հետազոտության ոլորտում քոլեջի նպատակադրումները, խնդիրները, պլանավորումներ և գործընթացներ չեն իրականացվում՝ խոչընդոտելով հետազոտության ոլորտում քոլեջի ռազմավարության մշակմանն ու իրագործմանը։ Հետևաբար, փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը կարիք ունի հստակեցնելու հետազոտության իր մոդելը՝ համարժեք բնութագրերով, որի արդյունքում կարող է խթանվել կրթական գործընթացներում հետազոտական բաղադրիչի ներդրումը։

Թեև քոլեջում թվով քիչ դասախոսներ իրենց անհատական նախաձեռնողականության արդյունքում ուսանողներին առաջարկում են հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքներ, մասնավորապես՝ պաստառներ, ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ, այդուհանդերձ այդ աշխատանքներն ուսումնական գործընթացի մաս չեն կազմում և իրականացվում են բացառապես կամավորության սկզբունքով։ Բացի այդ էլ՝ նշյալ աշխատանքերում վերլուծական բաղադրիչը և աշխատանքներին ցուցաբերած ինքնուրույն, ստեղծագործ մոտեցումը բացակայում է և, քանի որ առկա չեն կուրսային աշխատանքների և ռեֆերատների կազմման և գնահատման հստակ պահանջներ և չափանիշներ, ուստի քոլեջում վտանգված է հետազոտության իրականացումը։

Անհանգստացնող է, որ քոլեջում ներդրված չեն հետազոտական աշխատանքներ իրականացնելու խրախուսման մեխանիզմներ, ուստի քոլեջի դասախոսները հիմնականում հետազոտություններ չեն իրականացնում և իրենց ոլորտի միջազգային փորձը չեն ուսումնասիրում։

Դրական է գնահատվում, որ միջազգայնացմանը միտված գործընթացներով պայմանավորված՝ քոլեջի դասախոսները նախատեսել են առաջիկայում ուսումնասիրել իրենց ոլորտի միջազգային փորձը, սակայն քոլեջն այս հարցում ևս երկարաժամկետ և կարճաժամակետ պլանավորումներ չունի՝ խոչընդոտելով քոլեջում հետազոտական բաղադրիչի ներդրմանն ու գործարկմանը։ Ինչ վերաբերում է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածությանը, ապա դա քոլեջում երբեմն արտահայտվում է դասավանդման գործընթացում դասախոսական կազմի կողմից մշակված

ուսումնական ձեռնակների կիրառմամբ: Փորձագիտական խումբը նշում է, որ այս հարցում ևս քոլեջն իրականցված գործընթացներում որևէ պլանավորում չունի, ինչը կարող էր նպաստել քոլեջում ուսումնական և հետազոտական գործընթացների սերտացմանը:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ քոլեջը հետազոտության ոլորտում չի սահմանել իր նպատակադրումներն ու խնդիրները, հետազոտության ոլորտում ինչպես իրականցված գործընթացների, այնպես էլ կարճաժամկետ ու երկարաժամկետ պլանավորումներ առկա չեն, աշխատանքային պլանները չեն ներառում հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքներ, դրանց իրականացման պահանջներն ու չափանիշները հստակեցված չեն, ներդրված չեն ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, Գումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

## VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:**

**Փաստեր**: Գյումրիի «Պրոգրես» համալսարանն ունի սեփական տարածք՝ երկու առանձին շինություն, որտեղ տեղի են ունենում բժշկական քոլեջի ուսումնական գործընթացները: Քոլեջին հատկացված են 9 լսարաններ տարբեր մակերեսներով՝ նախատեսված 15-25 ուսանողների համար: Քոլեջում առկա են ուսումնական կաբինետներ և լաբորատորիաներ, մասնավորապես առկա են քիմիայի և դեղաբանության, ատամնատեխնիկական, պրոթեզների պատրաստման լաբորատորիաներ, անատոմիայի և ֆիզիոլոգիայի, ստոմատոլոգիական կաբինետներ: Լաբորատորիաներում և կաբինետներում առկա են քիմիական նյութեր և պարագաներ, անատոմիական մոդելներ, պաստառներ, պրոթեզների պատրաստման համար որոշ սարքեր և պարագաներ: Հարկ է նշել, որ քոլեջում բացակայում են ՊԿՉ-ներով պահանջվող քույրական գործի կազմակերպման, աղետների բժշկության, դեղագործության կազմակերպման, կառավարման և ապրանքագիտության, նյութաբանության, առաջին բժշկական օգնության իրականացման ուսուցման կաբինետները, ինչպես նաև մանրէաբանության և իմունաբանության, հիգիենայի և մարդու էկոլոգիայի, վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի, բուսաբանության և ֆարմակագնոզիայի, դեղերի դեղատնային և գործարանային տեխնոլոգիայի, դեղաձևերի պատրաստման

տեխնոլոգիայի և այլ լաբորատորիաներ։ Ռեսուրսային բացը որոշակիորեն լրացնելու նպատակով քոլեջը համագործակցում է գործատուների՝ տարածաշրջանի բժշկական կենտրոնի, ատամնատեխնիկական լաբորատորիայի և դեղատների հետ, որտեղ իրականացվում են մասնագիտական մոդուլների գործնական պարապմունքները և պրակտիկաները։ Քոլեջն ունի համակարգչային կաբինետ, որտեղ առկա է 3 աշխատող համակարգիչ։

Ուսանողական սրճարանը ուսանողների սակավաթիվ լինելու պատճառով ներկայումս չի գործում։ Առկա է մարզադահլիճ, նիստերի դահլիճ։ Որոշ հատվածներում հասանելի է Wi-Fi ծածկույթ։ Գյումրիի «Պրոգրես» համալսարանն ունի 2391 անուն գիրք, որից քոլեջի մասնագիտական դասընթացների համար նախատեսված է 350 անուն գիրք։ Պետք է նշել, որ գրադարանում գրքերը կանոնակարգված և դասավորված չեն։ Ուսանողներն ունեն գրադարանային քարտեր։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հազվադեպ են օգտվում գրադարանից և առաջադրանքների կատարման համար հիմնականում օգտագործում են դասախոսների կողմից տրվող ուսումնառության նյութերը կամ էլեկտրոնային աղբյուրները։

Ըստ կանոնադրության՝ քոլեջի եկամուտներն ու ծախսերը պլանավորվում են համալսարանի կողմից։ ԳՊՀ բժշկական քոլեջի Ֆինանսական մուտքերի ձևավորման հիմնական աղբյուրները 88%-ով ուսանողների վարձավճարներն են, 10%-ով վարձակալական վճարներն են, 2%-ով ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթից մուտքերն են։ 2022թ. տվյալներով քոլեջի մուտքերն ավելացել են՝ ի հաշիվ օտարերկրյա ուսանողների վարձավճարների, որոնք զգալիորեն՝ շուրջ 2,6 անգամ գերազանցում են տեղացի ուսանողների վարձավճարների չափը։ 2022թ. համալսարանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության տվյալներով նախորդ տարվա համեմատ ծառայությունների իրացումից հասույթը ավելացել է շուրջ 1,7 անգամ, դրան զուգահեռ՝ ծախսերի փոփոխություն քիչ է տեղի ունեցել, ինչը նպաստել է, որ համալսարանի շահույթը 2022թ. ավելանա շուրջ 16 անգամ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նախատեսում է ձևավորված շահույթն օգտագործել երկրորդ մասնաշենքում հանրակացարանային տարածքի վերանորոգման և օտարերկրա ուսանողներին տրամադրելու նպատակով։ Ինչ վերաբերում է քոլեջի ծառայությունների մատուցումից ստացված հասույթի մեծությանը, ապա այն 2020-2021թթ. համալսարանի համախառն հասույթի մեջ կազմել է 16%, իսկ 2022թ.՝ 7%։ Օտարերկրյա ուսանողների վարձավճարներից ստացված հասույթի տեսակարար կշիռը համալսարանի համախառն հասույթի մեջ կազմել է 3,7%։ Քոլեջի հասույթի նվազեցումը համալսարանի համախառն հասույթի նկատմամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ համալսարանն ավելի շատ օտարերկրյա ուսանողներ է ներգրավել, քան քոլեջը։ Քոլեջը ծախսերի գերակշիռ մասը հատկացնում է աշխատավարձի ֆոնդին, որը կազմում է ծախսերի 80%-ը։ Դասախոսական անձնակազմի աշխատավարձի ծախսերը 38% են, վարչական աշխատողներինը՝ 29%, ուսումնաօժանդակ անձնակազմինը՝ 13%։ Քոլեջի տնտեսական ծախսերը կազմում են 12,8%, ծառայությունների ձեռքբերման ծախսերը՝ 2,7%։ 0,20% -ի չափով

ֆինանսական միջոցներ են տրամադրվում նաև գրադարանային և որակի ապահովման գործընթացների ծախսերին։

Քոլեջում ֆինանսական միջոցների բաշխման հստակ քաղաքականություն առկա չէ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքները իրականացվում են գործատուների բազաներում, այդ իսկ պատճառով լաբորատոր և գործնական դասընթացների համար սարքերի և անհրաժեշտ նյութերի ձեռքբերում հիմնականում չի իրականացվում։ Վերջիններս տրամադրվում են գործատուի կողմից։ Միայն որոշ դասընթացների իրականացման համար ձեռք են բերվել քիմիական նյութեր և պարագաներ։

Մասնագիտական հիմնական մոդուլները դասավանդվում են պրակտիկ դասախոսների կողմից, ուսանողները տվյալ մոդուլի գործնական հմտությունները ձեռք են բերում բժշկական կենտրոնում, ատամնատեխնիկական լաբորատորիայում և դեղատներում՝ համատեղ կիրառելով նրանց ռեսուրսները։ Առկա են տվյալ հաստատությունների հետ կնքված պայմանագրերը։ Քոլեջը նախատեսում է իրականացնել շենքային պայմանների բարելավում։

Քոլեջում արտաքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է մեյլերի միջոցով։ Ներքին փաստաթղթաշրջանառությունը կատարվում է թղթային տարբերակով, առկա չէ ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ։ Առկա է արխիվ։

Քոլեջում անվտանգությունը պահպանվում է ինչպես պահակի, այնպես էլ շուրջօրյա՝ տեսախցիկների միջոցով։ Բուժկետը բացակայում է։ Բժշկական խորհրդատվությունների համար քոլեջը բավարվում է բժիշկ-դասախոսների ներկայությամբ, որնք միշտ չէ, որ գտնվում են քոլեջում։ Առկա են տարհանման պլաններ և կրակմարիչներ։ Քոլեջի շենքում վերելակ տեղակայված չէ, բացակայում են թեքահարթակները։ Պետք է նաև նշել, որ քոլեջն այս պահին չունի հատուկ կարիքներ ունեցող ուսանողներ։

Ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման համար հարցաթերթիկները բացակայում են, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կատարվում են բանավոր հարցումներ, որոնց արդյունքում ուսանողները հիմնականում գոհ են եղել առկա ռեսուրսներից։

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի տարածքներն ու լսարաններն ապահովում են տեսական ուսուցման իրականացումը, իսկ ՄԿԾ-ների վերջնարդյունքներին համապատասխան սարքավորումների և տեխնիկական միջոցների սակավության պայմաններում գործնական հմտությունների ձեռքբերումն իրականացվում է քոլեջի բազաներում՝ բժշկական կենտրոնում, դեղատներում և ատամնատեխնիկական լաբորատորիայում։ Դա նպաստում է իրական դեպքերին մոտ իրավիճակների հանդիպմանը և գործնական հմտությունների ձեռքբերմանը։ Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն անհրաժեշտություն ունի բարելավելու ինչպես շենքային պայմանները, այնպես էլ լաբորատորիաների և կաբինետների հագեցվածությունը (համակարգիչներ, մուլյաժներ), ինչը թույլ կտա ձեռք բերել և կատարելագործել կլինիկական հմտությունները նաև քոլեջում առանց գործատուների

օժանդակության։ Փորձագիտական խումբը տվյալ պարագայում առանձնացնում է այն ռիսկը, որ ուսանողների քանակի կտրուկ ավելացումը կարող է հանգեցնել անհրաժեշտ ռեսուրսների ոչ լիարժեք բավարարմանը։ Բացի այդ, ռեսուրսներով հագեցած կաբինետների և լաբորատորիաների առկայությունը քոլեջում ուսանողների թվաքանակի աճի դեպքում կարող է ապահովել գործատուներից անկախ և կայուն միջավայր։

Չնայած նրան, որ ուսանողների հանձնարարությունների կատարման համար ուսումնառության նյութերը և գրականությունը տրվում են դասախոսների կողմից, այնուամենայնիվ գրադարանային ռեսուրսների վերահագեցումը և կարգավորվածությունը կհանգեցնի դրա հասանելիությանը և կիրառմանը ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների շրջանում։ Օտարերկրյա ուսանողների ներգրավման տեսանկյունից կարևոր է նաև գրադարանային ռեսուրսների համալրումը օտարալեզու գրականությամբ։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ համալսարանի եկամուտները դիվերսիֆիկացված են՝ տեղացի և օտարերկրյա ուսանողների վարձավճարներ, վարձակալական վճարներ, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթից մուտքեր։ Հաշվի առնելով, որ 2022թ. քոլեջի մուտքերն աճել են՝ ի հաշիվ օտարերկրյա ուսանողների վարձավճարների ավելացման (այդ թվում՝ քոլեջի օտարերկրյա ուսանողների), ուստի նախորդ տարվա համեմատ համալսարանի ծառայությունների իրացումից հասույթը զգալիորեն ավելացել է և ծախսերի գրեթե նույնական մնալու պարագայում հանգեցրել է ֆինանսական արդյունքի՝ շահույթի զգալի աճի։ Միաժամանակ, գովելի է, որ հաստատությունը ավելացված շահույթի հաշվին նախատեսում է իրականացնել հանրակացարանային տարածքի վերանորոգում՝ փորձելով ապահովել օտարերկրյա ուսանողների կեցությունը։ Հարկ է նշել, որ քոլեջն ավելի քիչ օտարերկրյա ուսանողներ է ներգրավել, որն էլ պայմանավորել է համալսարանի համախառն հասույթի մեջ քոլեջի հասույթի տեսակարար կշռի նվազեցմանը։ Ողջունելի է, որ բացի աշխատավարձից, տնտեսական ծախսերից, ծառայությունների ձեռքբերման ծախսերից, քոլեջը որոշ միջոցներ է հատկացնում գրադարանային և որակի ապահովման գործընթացների համար, սակայն դրանց տեսակարար կշիռն ավելացնելու, ինչպես նաև ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար այլ ծախսեր տրամադրելու պարագայում կբարելավվի կրթական միջավայրը։

Դրական է, որ ռեսուրսները հիմնականում հասանելի են ուսանողներին և դասախոսներին, սակայն բանավոր հարցումները փաստաթղթային դարձնելը և դրանց վերլուծությունների իրականացումը թույլ կտան վեր հանել շահակիցների կարիքները, բացահայտել անհրաժեշտ ռեսուրսների պակասը և բարելավել դրանք։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը փորձել է կանոնակարգել փաստաթղթաշրջանառությունը ինչպես արտաքին շահակիցների, այնպես էլ ներքին շահակիցների հետ։ Այնուամենայնիվ, էլեկտրոնային ներքին փաստաթղթաշրջանառության ներդրումը քոլեջում տեղեկատվության տարածման գործընթացը կդարձնի ավելի կանոնակարգված։ Ուսումնական անվտանգ միջավայրի առկայությունը ապահովվում է նաև դասավանդող բժիշկ-մասնագետների միջոցով,

այնուամենայնիվ բուժկետի առկայությունը համապատասխան պարագաներով և դեղորայքով կբարելավեր ուսումնական անվտանգ միջավայրը:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ քոլեջում ընդհանուր առմամբ ուսումնական միջավայրի ապահովման համար առկա է նյութական և ֆինանսական ռեսուրսներ, վերջին տարում ֆինանսական ռեսուրսների զգալի աճ է ապահովվել, նախանշված է այդ ռեսուրսների ծախսման ուղղությունը, ՄԿԾ-ների իրականացման համար համատեղ կիրառվում են գործատուների բազաները, ընդհանուր առմամբ ապահովված են անվտանգության կանոնները, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:**

**Փաստեր**: Քոլեջն իր գործունեության վերաբերյալ հաշվետվողականությունը փորձում է ապահովել հաշվետվությունների ներկայացման միջոցով: Հաստատությունը ԿԳՄՄՆ-ին է ներկայացնում միջին մասնագիտական կրթական ծրագրերով լիցենզիաների ամենամյա հաշվետվություն, որտեղ տրամադրում է տեղեկատվություն լիցենզիոն ընդհանուր պահանջների՝ կազմակերպության զբաղեցրած տարածքների, մանկավարժական կազմի, կազմակերպության գրադարանային-տեղեկատվական հագեցվածության վերաբերյալ, ներկայացվում են նաև մարզագույքը, լաբորատորիաները և դրանց հագեցվածությունը: Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջը ներքին հաշվետվողականություն ապահովելու նպատակով՝ որպես համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում հաշվետվություն է ներկայացնում ռեկտորին, որն այլ ստորաբաժանումների հաշվետվությունների հետ քննարկվում է համալսարանի Գիտական խորհրդում, այնուհետև ներկայացվում ԳՊՀ-ի հիմնադիրների ժողովին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը ներկայացնում է ոչ թե առանձին հաշվետվություններ, այլ տրամադրում է տվյալներ, որոնք քննարկվում են Գիտական խորհրդում, մասնավորապես քննարկվում են տվյալ ուսումնական տարում քոլեջում տեղացի և օտարերկրյա ուսանողների ընդունելության, քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների, մասնագիտական ավարտական քննությունների վերաբերյալ

հարցեր։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում հստակ ձևավորված ներքին հաշվետվողականության մեխանիզմ և հաշվետվությունների ձևաչափեր առկա չեն։ Հաստատությունում ոչ մի ստորբաժանում գրավոր հաշվետվություն չի ներկայացնում իր կատարած աշխատանքի վերաբերյալ, աշխատանքների արդյունավետությունը գնահատվում է բանավոր ներկայացումների և քննարկումների միջոցով։ Փորձագիտական այցի ընթացքում փորձագիտական խմբին տրամադրվել է միայն ռեկտորի 2021-22 ուսումնական տարվա հաշվետվությունը, որտեղ ամփոփված են ուսումնական տարվա գործունեությունը և ապագա հեռանկարները։ Մասնավորապես նշվել է որակյալ պրոֆեսարադասախոսական կազմի առկայությունը և նրանց վերապատրաստման անհրաժեշտությունը, մասնագիտական կրթական ծրագրերի կատարելագործման կարևորությունը, թափանցիկության համար կատարվող գործընթացների կատարելագործումը, լաբորատորիաների հագեցվածության վերաբերյալ կատարված աշխատանքները, եռալեզու ուսուցման ներդրման հնարավորությունները։ Վերջինս նոր ձևաչափ է քոլեջի համար և դեռևս կարիք ունի լրամշակման։

Քոլեջում ընթացող գործընթացների թափանցիկությունն ապահովվում է պաշտոնական կայքի միջոցով։ Կայքի «Քոլեջ» և «Ընդունելություն» բաժիններում առկա է տեղեկատվություն ընդունելության, ուսման վարձաչափի, լաբորատոր հագեցվածության, պրակտիկաների բազաների վերաբերյալ։ Կայքէջի «Գրադարան» բաժնում ներկայացված են նաև որոշ փաստաթղթեր՝ կանոնադրություններ, բուկլետ, տվյալներ քոլեջի տարածքների վերաբերյալ և այլն։ Կայքը եռալեզու է, տեղեկատվությունը տրամադրվում է հայերենով, անգլերենով և ռուսերենով։ Այդուհանդերձ, կայքում հրապարակված տեղեկատվությունը պարբերաբար չի թարմացվում։ Կայքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջի վերաբերյալ եռալեզու տեղեկատվություն ներկայացված է միայն ընդունելության վերաբերյալ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կայքէջը պատասխանատու չունի, և վերջին ժամանակահատվածում չի թարմացվում։

Հաստատությունն իր գործընթացների մասին հրապարակումներ է իրականացնում նաև համալսարանի ֆեյսբուքյան էջում, որտեղ տեղադրվում են քոլեջի վեաբերյալ որոշ հայտարարություններ՝ ուսանողների ընդունելության և որոշ միջոցառումների մասին, ինչպիսիք են օրինակ՝ դիպլոմների հանձնման արարողություն, թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ։ Էջի թարմացումներով զբաղվում է գործավարը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին շահակիցները հիմնականում դիտարկում են ֆեյսբուքյան էջը՝ որպես տեղեկատվության ստացման հարթակ։

Հաստատության կողմից հրատարակվում են նաև տեղեկատվական բուկլետներ, որոնք պարունակում են տեղեկատվություն քոլեջի ՄԿԾ-ների, ուսման վարձերի և ընդունելության վերաբերյալ։ Քոլեջի մասին եռալեզու տեղեկատվություն ներկայացված է նաև www.education.am/progress.htm կայքում։

Քոլեջի հետ հետադարձ կապի հաստատման մեխանիզմներն են պաշտոնական կայքէջում նշված հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը։ Կոնտակտային

տվյալները ներկայացված են նաև Սփյուռ, Հայաստան տեղեկատու և այլ տեղեկատվական համակարգերում:

Շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները նոր են ձևավորվում, առկա է որոշակի տվյալների բազա շրջանավարտների վերաբերյալ, որոնք ամբողջական չեն: Գործատուների հետ հետադարձ կապն ապահովվում է քննարկումների միջոցով, որոնց պարբերականությունը դեռևս հստակեցված չէ: Քոլեջում հասարակությանը գիտելիքի փոխանցման հստակ մեխանիզմներ առկա չեն: Ըստ տնօրենի 2021-22 ուսումնական տարվա հաշվետվության՝ քոլեջի դասախոսները մասնակցել են «Ներգրավված քաղաքացի» դասընթացին, որտեղ ծանոթացել են հասարակությանը գիտելիքների փոխանցման մեթոդներին և դրանց կիրառմանը:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը որոշակի գործընթացներ է իրականացնում արտաքին հաշվետվողականություն ապահովելու համար: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ քոլեջի կողմից կառուցվածքային հիերարխիկ կապերի հստակեցումը, ներքին հաշվետվողականության մեխանիզմների ներդնումը մեծապես կնպաստեն իրականացվող գործընթացների արդյունավետության բարձրացմանը և շահակիցների շրջանում իրազեկվածության բարձրացմանը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև մշակվող հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի առկայությունը, որը հաստատությանը թույլ կտա վերհանել կատարված աշխատանքների բարելավման ենթակա կողմերը:

Դրական է գնահատվում, որ հաշվետվողականության և թափանցիկության ապահովման մշակույթը ներդրման փուլում է, և քոլեջը արդեն իսկ ընկալել է դրա անհրաժեշտությունը: Քոլեջում ընթացող գործընթացների վերաբերյալ թափանցիկության ապահովման տեսանկյունից դրական հանգամանք է կայքէջի և ֆեյսբուքյան էջի առկայությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ կայքէջում տեղեկատվության պարբերաբար թարմացումը, քոլեջի գործունեությանը վերաբերող ընթացակարգերի և ընթացիկ հաշվետվությունների տեղադրումը կհանգեցնեն արտաքին շահակիցների առավել լայն շրջանակի համար տեղեկատվության հասանելիությանը: Օտարերկրյա ուսանողներ ներգրավելու քոլեջի միտումները հաշվի առնելով՝ փորձագիտական խումբը կարևորում է օտար լեզուներով տեղեկատվության ամբողջական ներկայացումը ուսանողների ներգրավվածության մեծացման համար: Դրական հանգամանք է գործուն ֆեյսբուքյան էջի առկայությունը, ինչը քոլեջի համար հանդիսանում է հայտարարությունների տեղադրման և միջոցառումների լուսաբանման հարթակ, իսկ տեղեկատվական բուկլետների տպագրությունը և տարածումը ևս ապահովում են քոլեջի տեսանելիությունը արտաքին շահակիցների շրջանում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում հետադարձ կապի համար տարբեր հարթակներում ներկայացված մեխանիզմների առկայությունը: Շրջանավարտների և գործատուների հետ հետադարձ կապի մեխանիզմների կայուն կիրառումը քոլեջին հնարավորություն կտա գնահատել ուսումնական գործընթացի առկա վիճակը, դրա

համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին՝ վերհանելու առկա խնդիրները և արդյունքում մշակելու դրանց լուծման հնարավոր ուղիները:

Փորձագիտական խումբը, մտահոգիչ է համարում, որ որպես բժշկական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող քոլեջ՝ հաստատությունում ձևավորված չէ հասարակությանը բժշկական գիտելիքներ փոխանցելու մշակույթ, ինչը կարող է էականորեն բարձրացնել քոլեջի սոցիակական պատասխանատվության աստիճանը: Նման մեխանիզմների ձևավորումը հնարավորություն կընձեռի նաև տարածաշրջանում ձևավորել բարձր վարկանիշ՝ որպես բժշկական կրթական ծրագրեր իրականացնող և սոցիալական պատասխանատվություն ունեցող ուսումնական հաստատության:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ քոլեջում ներդրված են արտաքին և ներքին հաշվետվողականության ապահովման որոշ մեխանիզմներ, քոլեջի գործընթացների տեսանելիության և թափանցիկության նպատակով առկա են պաշտոնական կայքէջ և ֆեյսբուքյան էջ, առկա են հետադարձ կապի ապահովման հնարավորություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:**

**Փաստեր**: ԳՊՀ-ի սոցիալական համագործակցության զարգացումը դիտարկվում է ռազմավարական ուղղություն, որի նպատակը համալսարանի և նրա սոցիալական գործընկերների զարգացման մեջ աճող գիտակրթական, սոցիալ-մշակութային և տնտեսական ներդրման ապահովումն է, որը տարածվում է նաև քոլեջի արտաքին համագործակցության զարգացման վրա: ԳՊՀ-ի ՌԾ-ի 2.2.7 կետով ներկայացված է համալսարանի սոցիալական համագործակցության զարգացումը, նշված է ներկա վիճակն ու հիմնախնդիրները: ՌԾ-ից հարկ է առանձնացնել հետևյալը՝ «Վերջին տարիներին նկատվել է սոցիալական բնագավառում համալսարանի գործունեության ակտիվացում, ինչը հանգեցրել է նրա գործընկերների թվի աճի և նրանց հետ փոխշահավետ համագործակցության ամրապնդման: Աճում է դպրոցների, բուհերի, գիտական հիմնարկությունների և այլ կազմակերպությունների

քանակը, որոնց հետ համալսարանն իրականացնում է փոխգործակցություն մշտական հիմքի վրա։ Հատկապես արդյունվետ է զարգացել սոցիալական համագործակցությունը կրթական հիմնարկությունների հետ։ Հատուկ շեշտ է դրվում գործատուների հետ փոխհամագործակցությանը»։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը գործատու-գործընկերների հետ ձևավորել է փոխշահավետ գործուն համագործակցություններ, որոնց շրջանակում իրականացվում են արդյունավետ արտադրական և ուսումնական պրակտիկաներ, բացի այդ էլ՝ գործնական պարապմունքները ևս կազմակերպվում են գործատուների ռեսուրսային բազաներում, գործընկեր կազմակերպություններում աշխատում են քոլեջի շրջանավարտները։ 2022թ.-ից ԳՊՀ-ն ձեռնամուխ է եղել համալսարանի և քոլեջի կրթական ծառայությունների արտահանմանը և միջազգայնացմանը, որի արդյունքում 2022թ.-ից առ այսօր ԳՊՀ-ի բժշկական քոլեջում ներգրավվել են շուրջ 20 օտարերկրյա ուսանողներ (ներկայումս սովորում են 12 ուսանող, 8-ը բացակայությունների պատճառով հեռացվել են)։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԳՊՀ-ն կարևորում է քոլեջի միջազգայնացումն ու օտարերկրյա ուսանողների թվի մեծացումը, որի համար դեռևս չունի մշակված ուղենիշային փաստաթղթեր։ Ինչ վերաբերում է տարածաշրջանային միջին մասնագիտական կրթական փոխհամագործակցություններին, ապա այս հարթակում քոլեջը գործուն քայլեր չի ձեռնարկում։

Ըստ ԻՎ-ի՝ ԳՊՀ-ում գործում է Որակի ապահովման և միջազգային կապերի կենտրոնը, մինչդեռ համալսարանի կառուցվածքային սխեմայում առանձնացվում է Որակի ապահովման վարչությունը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համալսարանում գործում է Որակի ապահովման վարչությունը, որի գործողության շրջանակում դրված չէ ինչպես համալսարանի, այնպես էլ քոլեջի միջազգայնացման գործընթացի կանոնակարգումը։ Միջազգայնացման գործընթացին անմիջական մասնակցություն է ցուցաբերում համալսարանի ռեկտորը, աշխատանքներն իրականացնում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ուսումնական մասի վարիչը և գործավարը։ Այդ գործընթացում նրանց գործառույթները հստակեցված չեն։ 2022թ. քոլեջում 6 երկրից (Շրի Լանկա, Բանգլադեշ, Կամերուն, Եթովպիա, Հնդկաստան, Նիգերիա) 20 օտարեկրյա ուսանողներ են ներգրավվել։ Ուսանողներին դասավանդում են հայերենով՝ զուգահեռաբար թարգմանելով անգլերեն։ Միջազգայնացման գործընթացը, որպես նոր նախագիծ, քոլեջում ներդրվել է 2022-2023 ուստարվանից, առաջին ցիկլը դեռևս չի ավարտվել, հետևաբար չկան նաև այդ գործընթացի արդյունավետության գնահատումը։ Պետք է փաստել, որ օտարերկրյա ուսանողների զգալի մասի մոտ անգլերենի իմացության մակարդակը ցածր է։

Քոլեջն ունի գործուն արտաքին համագործակցություններ, այդ համագործակցությունների շրջանակում գործատու-գործընկերները տարածաշրջանում ոլորտի առաջատար կազմակերպություններ են։ Գործատուների մեծ մասը քոլեջի համար պրակտիկաների և գործնական պարապմունքների իրականացման բազաներ են, մասնավորաբար՝ Գյումրիի «Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, Գյումրիի ծննդատունը (միացել է Բժշկական կենտրոնին), Գյումրիի Ավստրիական մանկական հիվանդանոցը, Գյումրիի «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» ՓԲԸ-ն, Գյումրիի ախտաբանական-

անատոմիական լաբորատորիան, Գյումրիի «Մխիթարյան-դենտալ» կլինիկան, թիվ 2 ստոմատոլոգիական պոլիկլինիկան, «Ստելա-Նան դեղատուն» ՍՊԸ-ն: Քոլեջում մասնագիտական դասընթացներ են դասավանդում նշյալ կազմակերպությունների աշխատակիցներ: Փորձագիտական այցի շրջանակում փորձագիտական խումբն այցելել է Գյումրիի «Բժշկական կենտրոն», «Մխիթարյան-դենտալ» կլինիկա, «Ստելա-Նան» դեղատուն արտադրական պրակտիկաների բազաներ, դիտարկել է այն միջավայրը, ուր իրենց պրակտիկան ու գործնական պարապմունքներն անցկացնում են քոլեջի «Քույրական գործ», «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն» մասնագիտությունների ուսանողները: Հարկ է առանձնացնել, որ նշյալ բազաներն ապահովված են կլինիկական հմտություններ ապահովող անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով, ինչը հնարավոր է դարձնում պրակտիկաներն առավել արդյունավետ կազմակերպել՝ միտված քոլեջի ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը: Քոլեջի մակարդակում հաջողվել է մասնավոր հատվածի և պետական մասնակցությամբ Գյումրիի «Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հետ ձևավորել մասնակցային կրթական միջավայր՝ նպաստելով ուսանողների գործնական հմտությունների ձևավորմանը:

Ըստ ԻՎ տվյալների՝ դասավանդողների 50%-ը տիրապետում է օտար լեզվի, իսկ վարչական աշխատակիցների՝ 16%-ը: Քոլեջի ներկայացրած տվյալներով՝ ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակն ընդհանուր առմամբ ցածր է, լավագույն արդյունքը՝ «Քույրական գործ» ՄԿԾ-ի ուսանողների անգլերենի իմացությունն է՝ 28,2%, «Դեղագործություն» ՄԿԾ-ում՝ ռուսերենի իմացությունը՝ 17,95%: Դեղագործների և ատամնատեխնիկների անգլերենի իմացությունը 10,25% է: Ինչ վերաբերում է դասախոսների և վարչական անձնակազմի անգլերեն լեզվի իմացական մակարդակին, ապա, պայմանավորված օտարերկրյա ուսանողների ներգրավմամբ, համալսարանը նախատեսում է առաջիկայում անգլերենի զարգացման դասընթացներ կազմակերպել:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ համալսարանի սոցիալական համագործակցության զարգացումը ռազմավարական ուղղություն է, որը տարածվում է նաև քոլեջի արտաքին համագործակցության զարգացման վրա: Գովելի է, որ ՌԾ-ով սահմանված են կրթահամալիրի սոցիալական համագործակցության հիմնախնդիրներն ու զարգացման միտումները՝ նպաստելով արտաքին համագործակցությունների ամրապնդմանն ու ավելացմանը: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը բժշկության ոլորտի գործընկեր կազմակերպությունների հետ ունի փոխշահավետ գործուն համագործակցություններ, որոնց շրջանակում իրականացվում են քոլեջի արտադրական և ուսումնական պրակտիկաները, ռեսուրսային բազաներում կազմակերպվում են գործնական պարապմունքներ: Այդ կազմակերպություններում աշխատող քոլեջի դասախոսները մեծ դերակատարում ունեն գործնական պարապմունքները գործատուների բազաներում իրականացնելու գործում: Գործատուների ու մասնավոր հատվածի հետ աշխատելու նշյալ ձևաչափը հնարավորություն է տալիս ուսանողների մոտ ձևավորել կլինիկական հմտություններ, գործատուների մոտ զուգահեռաբար աշխատել:

Միևնույն ժամանակ մտահոգիչ է՝ տարածաշրջանային միջին մասնագիտական կրթական հաստատությունների հետ փոխհամագործակցությունների հարթակ քոլեջը դեռևս չի ձևավորել, ինչը խոչընդոտում է նրանց հետ ծրագրային համագործակցությունների խթանմանն ու ընդլայնմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ 2022թ.-ից ԳՊՀ-ն ձեռնարկել է համալսարանի և քոլեջի կրթական ծառայությունների արտահանման և միջազգայնացման գործընթացը, որի արդյունքում քոլեջում ներգրավված օտարերկրյա ուսանողներն արդեն ուսումնառում են ԳՊՀ-ի բժշկական քոլեջում։ Դրական մոտեցում է, որ քոլեջը կարևորում է միջազգայնացումն ու օտարերկրյա ուսանողների թվի ավելացումը, միևնույն ժամանակ մտահոգիչ է, որ քոլեջը դեռևս չի մշակել և կանոնակարգել դրա հետ կապված ուղենիշային փաստաթղթերը, որոնք կարող են օժանդակել քոլեջում միջազգայնացմանը նպաստող միջավայրի ձևավորմանը։ Դրական գնահատելով, որ միջազգայնացման գործընթացին անմիջական մասնակցություն է ցուցաբերում համալսարանի ռեկտորը և այլ աշխատակիցներ, փորձագիտական խումբը ռիսկային է համարում, որ ինչպես համալսարանը, այնպես էլ քոլեջը չունեն հստակ մշակված միջազգայնացման քաղաքականություն, առանձնացված չեն այդ գործընթացում ներգրավված աշխատակիցների գործառույթները, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ նոր նախագծի ամբողջական ներդրման, իրագործման և վերահսկման գործընթացներում։ Ի լրումն վերոնշյալի՝ քոլեջում միջազգայանացման գործընթացի առաջին ցիկլը չի ավարտվել, ուստի առկա չեն դրանց վերլուծություններ և գնահատումներ։

Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ քոլեջի արտաքին համագործակցությունների շրջանակն ապահովող հիմնական գործընկերները տարածաշրջանում ոլորտի առաջատար կազմակերպություններ են, որոնց ռեսուրսային բազաներն ապահովված են կլինիկական հմտություններ ապահովող անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով՝ նպաստելով ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը։ Գովելի է, որ քոլեջին հաջողվել է գործատուների հետ համատեղ ձևավորել մասնակցային կրթական միջավայր, որի արդյունքում ուսանողների մոտ ձևավորվում են որոշ գործնական հմտություններ։ Նշյալը կարող է նպաստել աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ծավալների ընդլայնմանը և շարունակական զարգացմանը։ Հարկ է նշել՝ քոլեջում օտարերկրյա ուսանողների քանակի ավելացմանը զուգընթաց անհրաժեշտություն կառաջանա նոր գործընկերային համագործակցությունների ձևավորման և զարգացման համար։

Դրական է համարվում, որ, պայմանավորված օտարերկրյա ուսանողների ներգրավմամբ և թարգմանչի միջոցով համատեղ դասընթացների իրականացմամբ, քոլեջի դասախոսների և ուսանողների անգլերեն լեզվի իմացության մակարդակը որոշակիորեն բարձրացել է։ Սակայն օտարերկրյա ուսանողների քանակի ավելացման պարագայում այդ ձևով դասընթացի իրականցումը կարող է արդյունավետ չլինել, ուստի քոլեջը դասընթացի իրականացման տարբեր մեխանիզմներ կիրառելու անհրաժեշտություն ունի։ Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի միջազգայնացման ներկայիս փուլում օբյեկտիվ անհրաժեշտություն է վարչական անձնակազմի անգլերեն լեզվի իմացության ցածր

մակարդակի բարձրացումը, որի հետ կապված համալսարանն առաջիկայում նախատեսել է դասախոսների և վարչական աշխատակիցների անգլերենի վերապատրաստումներ իրականացնել:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ ԳՊՀ-ի բժշկական քոլեջը գործատուների հետ ունի փոխշահավետ համագործակցություններ ինչպես պրակտիկաների, այնպես էլ գործնական պարապմունքների իրականացման համար, գործատուները տարածաշրջանում ոլորտի առաջատար կազմակերպություններ են, քոլեջը գործատուների հետ համատեղ ձևավորել է մասնակցային կրթական միջավայր, վերջին տարում ներգրավել են օտարերկրյա ուսանողներ 3 մասնագիտություններով՝ նպաստելով մասնագիտությունների միջազգայնացմանն ու կրթական ծառայությունների արտահանմանը, ներդրվել են օտար լեզվով դասավանդման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջ բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:**

**Փաստեր**: Քոլեջի որակի ապահովման գործընթացները մեկնարկել են 2012թ. համալսարանի որակի ապահովման գործընթացներին զուգահեռ: Համալսարանում գործում է Որակի ապահովման վարչությունը (վարչությունը սահմանված է Պրոգրես համալսարանի կառուցվածքում), որը սպասարկում է նաև քոլեջը, վարչության աշխատանքներում ներգրավված է մեկ աշխատակից: Քոլեջի համար առանձնացված չեն որակի ապահովման գործընթացները կարգավորող փաստաթղթեր: Քոլեջում գործում է միայն Պրոգրես համալսարանի որակի ապահովման կենտրոնի կարգը (կարգը գործում է 2012թ.-ից, որակի ստորաբաժանումը կոչվում է կենտրոն), որտեղ ներկայացված են կենտրոնի նպատակները, խնդիրները, գործառույթները, կառուցվածքը և կառավարումը: Ըստ սահմանված կարգի, կենտրոնի նպատակներն են՝

- աջակցել ԳՊՀ կրթության որակի գերազանցության նպատակներին,

- աջակցել, մշակել և ղեկավարության հետ իրականացնել և մշտապես բարելավել կրթության որակի մեխանիզմները:

Կարգում սահմանվում են նաև կենտրոնի գործառույթները, դրանք են՝

- մշակել, իրականացնել և մշտապես բարելավել որակի ներքին ապահովման գործընթացները,
- մշակել որակի ներքին չափանիշներ և չափորոշիչներ ՀՀ-ում ընդունված պահանջներին համապատասխան,
- մշակել և ներկայացնել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման որակի ապահովման գործիքներ և ընթացակարգեր,
- և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Որակի ապահովման վարչության աշխատակցի հիմնական աշխատանքները համալսարանում և քոլեջում հետևյալն են՝ օտարերկրյա ուսանողների տեղափոխության գործավարական աշխատանքների իրականացում, այցեր հանրակրթական դպրոցներ, համակարգիչների տեխնիկական սպասարկում և այլն: Պետք է փաստել, որ իրականացվող աշխատանքները Որակի ապահովման գործընթացների հետ չեն համընկնում և չեն համապատասխանում վերոնշյալ գործառույթներին: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ինչպես որակի ապահովման վարչության պետի, այնպես էլ քոլեջի մյուս աշխատակիցների մոտ ձևավորված չեն պատկերացումներ որակի ապահովման գործընթացների վերաբերյալ:

Որակի ապահովման վարչության կողմից մշակվել է նաև Կրթության որակի ապահովման ուղեցույցը, որը ներառում է՝ որակի ապահովման համակարգի առաքելությունը և նպատակները, որակի հիմնական հասկացությունները և սահմանումները, որակի կառավարման մոդելը, կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման գործընթացը, ուսումնառության ակնկալվող արդյունքները, ինքնավերլուծության մեթոդաբանությունը: Պետք է նշել, որ ուղեցույցում նշված բովանդակությունն առավելապես տրամադրում է տեղեկատվություն առհասարակ որակի ապահովման գործընթացների վերաբերյալ, սակայն դրանք հարմարեցված չեն Պրոգրես համալսարանի, առավելապես քոլեջի առանձնահատկություններին և կարիքներին:

Ըստ սահմանած կարգի՝ Կենտրոնի տնօրենը հաշվետու է ԳՊՀ Գիտական խորհրդին և ռեկտորատին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաշվետվություններ վարչության պետի (նույն կենտրոնի տնօրենի) կողմից չեն ներկայացվում, կառույցի աշխատանքների վերահսկողությունն իրականացվում է ռեկտորի հետ բանավոր քննարկումների մակարդակում:

Պետք է նշել, որ Որակի ապահովման վարչության պետի համար առանձնացված չէ աշխատանքային միջավայր՝ առանձին աշխատասենյակ, համակարգիչ և այլ անհրաժեշտ միջոցներ: Վարչության պետի աշխատանքներն իրականացվում են համակարգչային կաբինետում: Համալսարանի բյուջեում որակի ապահովման աշխատանքներին ուղղված են սակավ միջոցներ (0,20%), որոնց ծախսման ուղղությունները հստակ չեն:

Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված չեն որակի ապահովման գործընթացներում: Պրոգրես համալսարանում առկա է դասավանդման որակի, արդյունավետության և ուսանողների հարցման կարգ, որտեղ սահմանված են ուսանողների շրջանում հարցումների անցկացման, արդյունքների մշակման և պահպանման հստակ պահանջներ, կարգը տարածվում է նաև քոլեջի աշխատանքների վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարգը չի գործում, հարցումներ չեն անցկացվել ոչ ուսանողների, ոչ էլ այլ շահակիցները շրջանում:

Գործատուները որակի ապահովման գործընթացների մասնակից են այնքանով, որ ներգրավված են ուսանողերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում: 2021-2022թթ. հանձնաժողովների նախագահների կարծիքների ուսումնասիրությունից պարզ դարձավ՝ դիտարկված 3 ՄԿԾ-ների համար բառացիորեն կրկնվում են և չեն կարող տվյալ պարագայում արտացոլել արտաքին շահակիցների իրական կարիքները և կարծիքները:

Քոլեջում որակի ապահովման համակարգը ներդրվել է 2012թ.-ից, որակի ապահովման համակարգի առջև դրված գործառույթները չեն իրականացվել, իսկ ՊԻԳԲ շրջափուլը չի ընկալվել և գործարկվել քոլեջի կողմից, համակարգը չի կայացել և, ըստ այդմ, վերանայման գործընթաց տեղի չի ունեցել:

Քոլեջն իրականացրել է ինքնավերլուծություն Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով, ինքնավերլուծությունը հիմնականում վերաբերել է Պրոգրես համալսարանին, բացակայել է վերլուծական բաղադրիչը, հստակ չեն եղել տվյալների հավաքագրման մեխանիզմները, որոշ դեպքերում առկա են եղել ոչ հավաստի տվյալներ, օրինակ՝ Ինքնավերլուծություն մեջ առկա տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման աղյուսակներում ներկայացված է եղել 100% բավարարվածության ցուցանիշներ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայացված տվյալները հավաքագրվել են բանավոր ձևով: Պետք է նաև փաստել, որ ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խումբն ընդհանուր առմամբ տեղեկացված չէր ինքնավերլուծության բովանդակությունից:

Ներքին և արտաքին շահակիցների համար որակի ապահովման գործընթացների թափանցիկության ապահովման հիմնական գործիքը Պրոգրես համալսարանի կայքէջն է: Կայքէջի ոսումնասիրությունից պարզ դարձավ, որ Որակի ապահովման գործընթացների վերաբերյալ միայն հրապարակված է Պրոգրես համալսարանի որակի ապահովման կենտրոնի կարգը:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում 2012թ.-ից փորձեր են իրկանացվել ներդնելու որակի ապահովման գործընթացներ, ինչպես նաև քայլեր են ձեռնարկվել համակարգը ձևավորելու ուղղությամբ, համապատասխանաբար մշակվել են Որակի ապահովման կանոնակարգ և ուղեցույց, այնուամենայնիվ համակարգի վերաբերյալ վարչության, ինչպես նաև քոլեջի ղեկավար կազմի ունեցած ոչ ամբողջական ընկալումները խոչընդոտել են համակարգի ձևավորմանը և որակի մշակույթի տարածմանը: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է ներքին և արտաքին

շահակիցների շրջանում որակի ապահովման գործընթացների վերաբերյալ իրական պատկերացումների ձևավորումը, առավելապես հրատապ է Որակի ապահովման գործընթացներով զբաղվող աշխատակիցների մասնագիտական աճի ապահովումը, որը կարող է նպաստել մյուս շահակիցների շրջանում որակի ապահովման գործընթացների վերաբերյալ տեղեկացվածության աստիճանի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև ղեկավար կազմի կողմից հստակ պահանջների սահմանումը որակի ապահովման համակարգի առջև՝ կարևորելով տվյալների հավաքագրման, քոլեջում իրականացվող տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման, վերլուծությունների իրականացման գործընթացները: Առաջնահերթ է նաև Որակի ապահովման վարչության գործառույթների հստակեցումը՝ որպես տվյալներ հավաքագրող և վերլուծող կառույցի, ինչը կնպաստի որակի ապահովման գործընթացների արդյունավետ պլանավորմանը և իրականացմանը: Անհրաժեշտ է նաև հավելել, որ քոլեջի համար հրատապ է ՈԱ համակարգի կայացումը նաև միջազգայնացման տեսանկյունից՝ նպաստելով գործընթացների արդյունավետության գնահատմանը և տվյալահենք որոշումների կայացմանը:

Չնայած նրան, որ համալսարանում առկա են Որակի ապահովման գործընթացները կանոնակարգող կարգ և ուղեցույց, որը տարածվում է նաև քոլեջի վրա, այնուամենայնիվ դրանք թարմացված չեն և չեն արտահայտում որակի ապահովման վերաբերյալ ժամանակակից մոտեցումները, բացի այդ փաստաթղթերում նշված տարբեր հասկացությունները կարող են հակասություն ստեղծել շահակիցների մոտ որակի ապահովման կառույցի վերաբերյալ: Վերը նշված փաստաթղթերում արտացոլված չեն նաև քոլեջի առաձնահատկությունները, ինչպես նաև առկա չեն համապատասխան գործիքակզմ որակի ապահովման գործընթացներն իրականացնելու համար, վերոնշյալը խոչընդոտում է որակի ապահովման համակարգի կայացումը քոլեջում:

Քոլեջը կարիք ունի նաև մշակելու և ներդնելու տվյալների հավաքագրման մեխանիզմներ, որոնք հնարավորություն կընձեռեն հավաքագրելու օբյեկտիվ տեղեկատվություն քոլեջում իրականացվող գործընթացների արդյունավետության վերաբերյալ՝ հատկապես կրթական ծրագրերի իրականացման տեսանկյունից, վերլուծությունների իրականացումը կնպաստի տվյալահենք որոշումների կայացմանը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ Որակի ապահովման վարչության աշխատանքների իրականացման համար առկա չէ համապատասխան աշխատանքային միջավայր, և հստակ չէ տրամադրվող ֆինանսական միջոցների ծախսման ուղղությունը, ինչը կարող է խոչընդոտել ՈԱ աշխատանքների համակարգային կազմակերպմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ ՈԱ համակարգն իր բոլոր գործընթացներում առաջնոդվի պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում շրջափուլով, որը կնպաստի թերությունների ժամանակին հայտնաբերմանը և լուծմանը:

Փորձագիտական խումբը բացասական է համարում, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցները հիմնականում ներգրավված չեն եղել որակի ապահովման գործընթացներում, որը հանգեցրել է նրան, որը խոչընդոտել է քոլեջում որակի մշակույթի ձևավորմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Պրոգրես համալսարանի պաշտոնական կայքէջում ՈԱ գործընթացները ներառող առանձնացված բաժնի առկայությունը կնպաստի գործընթացների թափանցիկության ապահովմանը:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ բացակայում են քոլեջում որակի ապահովման գործընթացները, առկա չեն պլանավորումներ, որակի ապահովման վարչության պետի գործառույթները հստակեցված չեն, իրականացվող գործընթացները որակի ապահովման գործընթացի տրամաբանության մեջ չեն, բացակայում է համապատասխան գործիքակազմը, ներքին և արտաքին շահակիցները ներգրավված չեն ՈԱ գործընթացներում, որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլը չի գործում, առկա չեն որակի ապահովման գործընթացների տարածման մեխանիզները, որակի ապահովման վերաբերյալ բացակայում է աշխատակիցների միջև երկխոսությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Գյումրու «Պրոգրես» համալսարանի բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

## ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

| ՉԱՓԱՆԻՇ | ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| 1. Առաքելություն և նպատակներ | Բավարարում է |
| 2. Կառավարում ու վարչարարություն | Չի բավարարում |
| 3.Մասնագիտության կրթական ծրագրեր | Չի բավարարում |
| 4. Ուսանողներ | Բավարարում է |
| 5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ | Բավարարում է |
| 6. Հետազոտություն և զարգացում | Չի բավարարում |
| 7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ | Բավարարում է |
| 8.Հասարակական պատասխանատվություն | Բավարարում է |
| 9. Արտաքին կապեր և միջազգայնացում | Բավարարում է |
| 10. Որակի ներքին ապահովման համակարգ | Չի բավարարում |

**Արմենուհի Մհերյան**
Փորձագիտական խմբի ղեկավարի

**19-ը մայիսի 2023թ.**

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

**1. Արմենուհի Միերյան՝** 2000թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) Ֆինանսահաշվային ֆակուլտետի, ֆինանսներ և վարկ մասնագիտությունը, 2004թ. եղել է նույն բուհի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի ասպիրանտ: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու, դոցենտ է: 2006–2021թթ. աշխատել է ՀՊՏՀ, «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների՝ Տվյալների մշակումը, վիճակագրական վերլուծությունը և ներկայացումը SPSS վիճակագրական փաթեթի միջոցով, Training on capacity building for implementing bologna reforms, «Տեղեկատվական համակարգերի տիրապետում և կատարելագործում», «Ֆինանսական հաշվառում, վերլուծություն և աուդիտ», «Տնտեսամաթեմատիկական մեթոդների և մոդելների յուրացում և կիրառում» և այլ թեմաներով: 2022թ.-ից մինչ օրս Հայաստանի Եվրոպական համալսարանի «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս է:

**2. Հեղինե Գևորգյան՝** 2016թ. -ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատը՝ «Կենսաքիմիա» մասնագիտությամբ՝ ստանալով ուսուցչի որակավորում: 2018թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրան «Կենսաքիմիա» մասնագիտությամբ: 2021թ.-ին ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ՝ պաշտպանելով «Պրոտոնային FOF1-ԱԵՖազի և մրջնաթթուջրածինլիազի փոխազդեցությունը ածխածնի տարբեր աղբյուրների և դրանց խառնուրդների խմորման ընթացքում» թեմայով ատենախոսությունը: Աշխատում է Երևանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում՝ ասիստենտ, Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող է, կենսաբանական գիտությունների թեկնածու:

**3. Գոհար Սարգսյան՝** 1997թ. ավարտել է Երևանի պետական բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետը, իսկ 1998թ.՝ ինտերնատուրան: 1999թ.-ից մինչ օրս աշխատում է Երևանի հենակետային բժշկական քոլեջում, եղել է վերակենդանացման, աղետների բժշկության, քաղաքացիական պաշտպանության, անվտանգության և առաջին բուժօգնության ամբիոնի դասախոս, ապա՝ մեթոդիստ: 2021թ.-ից՝ կրթության որակի ապահովման պատասխանատուն է: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների:

**4. Միլենա Միրզոյան՝** 2010թ. -ից մինչ օրս սովորում է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ: 2022թ. մասնակցել է ՈԱԱԿ-ի «ՈՒսանողության ձայն» նախագծի կողմից կազմակերպված ուսանող փորձագետի դասընթացին:

**5.**

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

**20.02.2023թ.-23.02.2023թ.**

| | 20.02.2023թ. | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպում ռեկտորի հետ | 09:30 | 10:30 | 60 րոպե |
| 2. | Հանդիպում քոլեջի փոխտնօրենների և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ | 10:40 | 11:40 | 60 րոպե |
| 3. | Հանդիպում ինքնավերլուծություն կատարած աշխատանքային խմբի հետ (10-12 հոգի) | 11:50 | 12:30 | 40 րոպե |
| 4. | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | 12:40 | 13:40 | 60 րոպե |
| 5. | Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ (10-12 հոգի) | 13:50 | 14:50 | 60 րոպե |
| 6. | Հանդիպում գործատուների հետ (10-12 հոգի) | 15:00 | 16:00 | 60 րոպե |
| 7. | Հանդիպում քոլեջի ստորաբաժանումների ղեկավարների և այլ աշխատակիցների հետ (դեկաններ, գլխավոր հաշվապահ, պրակտիկայի կազմակերպիչ, գրադարանավար) | 16:10 | 17:10 | 60 րոպե |
| 8. | Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում | 17:20 | 18:30 | 70 րոպե |

| | 21.02.2023թ. | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպում հիմնադիրների ժողովի և խորհրդի հետ | 09:30 | 10:20 | 50 րոպե |
| 2. | Դասալսումներ | 10:30 | 11:30 | 60 րոպե |
| 3. | Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ(10-12 հոգի ) | 11:40 | 12:40 | 60 րոպե |
| 4. | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | 12:50 | 13:50 | 60 րոպե |
| 5. | Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի) | 14:00 | 14:50 | 50 րոպե |
| 6. | Հանդիպում օտարերկրյա ուսանողների հետ | 15:00 | 15:40 | 40 րոպե |
| 7. | Հանդիպում Ուսանողական խորհրդի հետ | 15:50 | 16:30 | 40 րոպե |
| 8. | Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակհանդիպում | 16:40 | 18:30 | 110 րոպե |

| | 22.02.2023թ. | | | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպում ուսումնական գծով փոխտնօրենի հետ | | | 09:30 | 10:30 | 60 րոպե |
| 2. | Հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի դասախոսական կազմի հետ (10-12 հոգի) | Հանդիպում . «Դեղագործություն» կրթական ծրագրի դասախոսական կազմի հետ (10-12 հոգի) | Հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի դասախոսական կազմի հետ (10-12 հոգի) | 10:40 | 11:40 | 60 րոպե |
| 3. | Հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի) | Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի) | Հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ հետ (10-12 հոգի) | 11:50 | 12:50 | 60 րոպե |
| 4. | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | | | 13:00 | 14:00 | 60 րոպե |
| 5. | Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում | | | 14:10 | 18:30 | 260րոպե |

| | 23.02.2023թ. | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպում Որակի ապահովման վարչության հետ | 09:30 | 10:30 | 60 րոպե |
| 2. | Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ | 10:40 | 11:20 | 40 րոպե |
| 3. | Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ | 11:30 | 12:30 | 60 րոպե |
| 4. | Ընդմիջում, փորձագիտական խմբի Քննարկումներ | 12:40 | 13:40 | 60 րոպե |
| 5. | Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպումներ | 13:50 | 15:30 | 90 րոպե |
| 6. | Հանդիպում քոլեջի ղեկավար կազմի հետ և փորձագիտական այցի ամփոփում | 15:40 | 16:00 | 20 րոպե |

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

| N | Փաստաթղթի անվանում | Չափանիշ |
|---|---|---|
| 1. | Ներկայումս կիրառվող ռազմավարական պլան | 1 |
| 2. | Քոլեջի և որակի ապահովման վարչության կարճաժամկետ պլաններ (վերջին 1 տարվա) | 1 |
| 3. | Քոլեջի տարեկան բյուջե և նախահաշիվ (վերջին 3 տարիների համար) | 2 |
| 4. | Գիտական խորհրդի կազմը և խորհրդի արձանագրություններ | 2 |
| 5. | Էթիկայի կանոնակարգ | 2 |
| 6. | Գիտական խորհրդի կամ հիմնադիրների խորհդի- նիստերի արձանագրություններ, որտեղ քննարկվում են քոլեջի վերաբերյալ հարցեր | 2 |
| 7. | Ուսումնաօժանդակ կազմի քանակ | 2 |
| 8. | Հաստիքացուցակ | 2 |
| 9. | Ներկայացված 3 կրթական ծրագրերի մասնագիտական մոդուլների շրջանակներում ուսանողներին ներկայացվող ընթացիկ հանձնարարականներ (հանձնարարականներ որոնցով գնահատվում են ուսանողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները՝ ըստ ուսումնառության արդյունքների) | 3 |
| 10. | 3 ՄԿԾ-ների շրջանակներում ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցաշարեր (վերջին 3 տարիների համար) | 3 |
| 11. | Դասախոսների կողմից ուսաանողներին տրամադրված ուսումնառության նյութեր | 3 |
| 12. | 3 ՄԿԾ-ների ուսպլաններ | 3 |
| 13. | Քոլեջի շրջանավարտների զբաղվածության տվյալներ (3 ՄԿԾ-ների և վերջին 3 տարիներ համար) | 3 |
| 14. | 3 կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողներին ներկայացվող գրականության ցանկ | 3 |
| 15. | Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ (3 ՄԿԾ-ների և վերջին 3 տարիներ համար) | 3 |
| 16. | Դասացուցակներ | 3 |
| 17. | Ուսանողների անհատական փաթեթեներ (գործեր) | |
| 18. | Պրակտիկաների ծրագրեր, ուսանողների կողմից լրացված օրագրեր բոլոր 3 ՄԿԾ-ների համար | 3 |
| 19. | Դիպլոմի նմուշ | 3 |
| 20. | «Պրոգրես համալսարան» բժշկական քոլեջի պետական դիպլոմների գրացամատյան | 4 |
| 21. | Տեղացի և օտարերկրացի ուսանողների ընդունելության ընթացակարգ | 4 |

| | | |
|---|---|---|
| 22. | Ուսումնառողների շարժի մատյան | 4 |
| 23. | Դպրոցներ այցեր կատարելու պլան կամ ժամանակցույց | 4 |
| 24. | Ուսանողների կողմից կազմված CV-ներ | 4 |
| 25. | Դասընթացի/մոդուլի գնահատման հարցաշարեր և վերլուծություններ վերջին 3 տարիների համար | 4 |
| 26. | Ուսանողական խորհրդի կանոնադրություն | 4 |
| 27. | Ուսանողներին տրամադրվող խորհրդատվական պարապմունքների բարելավման ծրագրեր- և ժամանակացույցներ | 4 |
| 28. | Կարիերայի կենտրոնի կանոնակարգ | 4 |
| 29. | Ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգ | 4 |
| 30. | Քոլեջի շրջանավարտ հանդիսացող դասախոսների ցանկ (քոլեջի մակարդակով) | 5 |
| 31. | Գործատու/պրակտիկ դասախոսների ցանկ (քոլեջի մակարդակով) | 5 |
| 32. | Աշխատակիցների պաշտոնի անձնագրեր (տրամադրվել են աշխատանքային պայմանագրերը) | 5 |
| 33. | Դասախոսական կազմի հրապարակումները 2014թ.-ից մինչ օրս (2 հրապարակում) | 5 |
| 34. | Դասախոսական կազմի ընդունման, ազատման և համալրման կարգ | 5 |
| 35. | Դասալսումների արդյունքներ | 5 |
| 36. | Դասախոսի գնահատման ԴՈՒԱ-ի կարգ | 5 |
| 37. | Դասախոսների անձնական գործեր | 5 |
| 38. | Վերջին 3 տարիներ դասախոսական կազմի մասնագիտական և ոչ մասնագիտական վերապատրաստումների ցանկ (միայն քոլեջի համար) | 5 |
| 39. | Վերապատրաստումների ցանկ, վերապատրաստվող դասախոսների կազմ | 5 |
| 40. | Քոլեջի դասախոսների մասնագիտական վերապատրաստումների ցանկ | 5 |
| 41. | Դասախոսական կազմի պաշտոնի անձնագրեր | 5 |
| 42. | Ռեֆերատներ, կուրսայիններ, անհատական, նախագծային աշխատանքներ, որոնք իրականացվում են ուսանողների կողմից | 6 |
| 43. | Բժշկական գրականության անվանացանկ՝ ըստ կուրսերի(միայն քոլեջի համար)։ | 7 |
| 44. | ԳՊՀ բյուջե, ֆինանսական հաշվետվություններ | 7 |
| 45. | Ռեկտորի հաշվետվություններ վերջին 3 տարվա /տրամադրվել է վերջին 1 տարվանը/ | 8 |
| 46. | Պրակտիկաների վայրերի հետ պայմանագրեր | 9 |
| 47. | Որակի ապահովման և միջազգային կապերի կենտրոնի-կանոնակարգ,աշխատանքային դրույթներ | 9 |

| | | |
|---|---|---|
| 48. | ՈՆԱ ընթացակարգեր | 10 |

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Ստոմատոլոգիայի, ֆիզիկայի, անատոմիայի, զինպատրաստության, համակարգչային կաբինետներ,
2. ատամնաբուժարան,
3. քիմիայի լաբորատորիա,
4. դահլիճ
5. գրադարան,
6. մարզադահլիճ,
7. լսարաններ
8. ճաշարան,
9. դեկանատներ,
10. պահեստ,
11. գործատուների բազաներ՝ ատամնատեխնիկական լաբորատորիա, դեղատներ, Գյումրի ԲԿ։

## ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



## ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|---|---|
| **ԳՊՀ** | Գյումրու Պրոգրես ամալսարանի |
| **ԲԿ** | Բժշկական կենտրոն |
| **ԿԳՄՄՆ** | Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն |
| **ՄԿԾ** | Մասնագիտության կրթական ծրագիր |
| **ՄԿՈՒ** | Մասնագիտական կրթություն և ուսուցում |
| **ՄՈՒՀ** | Մասնագիտական ուսումնական հաստատություն |
| **ՈԱ** | Որակի ապահովում |
| **ՈԱԱԿ** | Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն |
| **ՈԱՇ** | Որակավորումների ազգային շրջանակ |
| **ՊԿՉ** | Պետական կրթական չափորոշիչ |
| **ՌԾ** | Ռազմավարական ծրագիր |
| **ՍՊԸ** | Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն |
| **ՈՒԽ** | Ուսանողական խորհուրդ |
| **ՓԲԸ** | Փակ բաժնետիրական ընկերություն |